«Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում (որպես 2008թ. հրապարակված ՖՀՄՍ-ներում բարելավումներ-ի մաս)

Փոփոխություններով սահմանվում է, որ դուստր կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները պետք է դասակարգվեն որպես վաճառքի համար պահվող, երբ Ընկերությունը պարտավորված է իրականացնել վաճառքի ծրագիր, որն հանգեցնում է այդ դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորստի՝ անկախ այն բանից, թե արդյոք Ընկերությունը վաճառքից հետո կպահպանի չվերահսկվող բաժնեմասեր դուստր կազմակերպությունում:

Փոփոխություններ
«Ֆինանսական գործիքներ. ճանաչումն ու չափումը» ՀՀՄՍ 39-ում. հեջավորման ենթակա հոդվածներ

Փոփոխությունները հստակեցնում են հեջի հաշվապահական հաշվառման երկու ասպեկտ՝ գնաճի կամ դրա մի մասի նախատեսումը որպես հեջավորված ռիսկ և օպցիոններով հեջավորումը:

ՖՀՄՍԿ 17 «Ոչ դրամական ակտիվների բաշխումը սեփականատերերին»

Սույն մեկնաբանությունը տրամադրում է ուղեցույց համապատասխան հաշվապահական հաշվառման մասին, երբ կազմակերպությունը որպես շահաբաժիններ իր բաժնետերերին բաշխում է դրամական միջոց չհանդիսացող ակտիվներ:

ՖՀՄՍԿ 18 «Հաճախորդներից ակտիվների փոխանցումը»

Այս մեկնաբանությունն անդրադառնում է «հաճախորդներից» հիմնական միջոցների փոխանցման հաշվապահական հաշվառմանը ստացողների կողմից, և եզրահանգումն այն է, որ եթե փոխանցված հիմնական միջոցի միավորը բավարարում է ստացողի տեսանկյունից ակտիվի սահմանմանը, ստացողը պետք է ճանաչի ակտիվն իր իրական արժեքով՝ փոխանցման ամսաթվի

դրությամբ՝ կրեդիտը ճանաչելով որպես հասույթ՝ «Հասույթ» ՀՀՄՄ 18-ին համապատասխան:

2009թ. հրապարակված
ՖՀՄՄ-ներում բարելավումներ

Բացի ՖՀՄՄ 5-ում, ՀՀՄՄ 1-ում և ՀՀՄՄ 7-ում փոփոխություններից, որոնք ավելի վաղ նկարագրված էին 2.1 բաժնում, 2009թ. հրապարակված ՖՀՄՄ-ներում բարելավումների կիրառումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

ՀՀՄՄ 1.112(ա),117

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի տարրեր

3.1. Հայրարարություն համապատասխանության մասին

ՀՀՄՄ 1.16

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

ՀՀՄՄ 1.17(բ)

3.2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

ՀՀՄՄ 1.17(բ)

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ գույքի և ֆինանսական գործիքների, որոնք չափվում են վերագնահատված գումարներով կամ իրական արժեքներով, ինչպես բացատրված է ստորև՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական տարրերը բերված են ստորև:

3.3 Գուղվի

Ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջացող գուղվիլը հաշվառվում է գործունեության ձեռքբերման օրվա դրությամբ որոշված ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեքկումից կորուստները:

Արժեքկումն ստուգում անցկացնելու նպատակով գուղվիլը բաշխվում է Ընկերության բոլոր այն դրամաստեղծ միավորներին, որոնք, ակնկալվում է, որ կշահեն միավորման սիներգիզմից:

Գուղվիլի գծով արժեքկումից կորուստն ուղղակիորեն ճանաչվում է շահույթում կամ վնասում[Համապարփակ ֆինանսական արդյունքների/ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում]: Գուղվիլի գծով ճանաչված արժեքկումից կորուստը չի հակադարձվում հետագա ժամանակաշրջաններում:

Տվյալ դրամաստեղծ միավորի օտարման ժամանակ դրան վերագրված գուղվիլի գումարը հաշվի է առնվում օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս:

3.3 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպությունը կազմակերպություն է, որի նկատմամբ Ընկերությունն ունի նշանակալի ազդեցություն, որը չի հանդիսանում ո՛չ դուստր կազմակերպություն, և ո՛չ էլ բաժնեմաս համատեղ ձեռնարկում: Նշանակալի ազդեցությունը ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների ընդունմանը մասնակցելու կարողությունն է, բայց ոչ այդ քաղաքականությունների վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Ասոցիացված կազմակերպությունների ֆինանսական արդյունքները, ակտիվներն ու պարտավորությունները ներառված են սույն ֆինանսական հաշվետվություններում՝ օգտագործելով հաշվապահական հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ ներդրումը դասակարգված է որպես վաճառքի համար պահվող, որի դեպքում այն հաշվառվում է՝ «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություն» ՖՀՄՄ 5-ին համապատասխան:

Ասոցիացված կազմակերպությունում ներդրման գծով արժեքկումից կորստի ճանաչման անհրաժեշտությունը որոշելու համար կիրառվում են ՀՀՄՄ 39-ի պահանջները: Անհրաժեշտության դեպքում ներդրման ամբողջ հաշվեկշռային արժեքի (ներառյալ գուղվիլի) արժեքկվածությունը ստուգվում է «Ակտիվների արժեքկում» ՀՀՄՄ 36-ին համապատասխան՝ որպես առանձին ակտիվ՝ դրա փոխհատուցվող գումարը (օգտագործման արժեքից և «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը) համեմատելով հաշվեկշռային արժեքի հետ: Արժեքկումից ճանաչված կորուստը կազմում է ներդրման հաշվեկշռային արժեքի մի մաս: Այդ արժեքկումից կորստի հակադարձումը ճանաչվում է՝ համաձայն ՀՀՄՄ 36-ի այն չափով, որքանով ներդրման փոխհատուցվող գումարը հետագայում աճում է:

3.8 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները և օտարման խմբերը դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանց հաշվեկշռային արժեքը հիմնականում փոխհատուցվելու է ավելի շուտ վաճառքի գործարքի, քան շարունակական օգտագործման միջոցով: Այս պայմանը համարվում է բավարարված միայն այն ժամանակ, երբ վաճառքը խիստ հավանական է, և ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) մատչելի է անմիջական վաճառքի համար իր ներկա վիճակում: Ընկերության ղեկավարությունը պետք է պարտավորված լինի վաճառելու ակտիվը, և պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտված վաճառք ճանաչելու պայմաններին:

ՀՀՄՄ 18.35(ա)

3.9 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, զեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:

3.9.1 Ապրանքների վաճառք

Ապրանքի վաճառքից հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ հետևյալ բոլոր պայմանները բավարարված են.

- Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու օգուտները,
- Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:
- հասույթի գումարը կարող է չափվել արժանահավատորեն,
- հավանական է, որ գործարքի հետ ասոցիացված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և
- Գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները կարող են չափվել արժանահավատորեն:

Մասնավորապես, ապրանքի վաճառքից հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքն առաքվում է, և սեփականության իրավունքը փոխանցվում է:

3.9.2 Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցման պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի ավարտվածության աստիճանը որոշվում է հետևյալ կերպ.

- Տեղակայման ծառայության վճարները ճանաչվում են տեղակայման ավարտվածության աստիճանի հիման վրա՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փաստացի ծախսված ժամանակի և տեղակայման համար գնահատված ընդհանուր ժամանակի հարաբերակցությունը,
- վաճառված արտադրանքի գնում ներառված սպասարկման վճարները ճանաչվում են՝ վաճառված արտադրանքի սպասարկման գնահատված ընդհանուր ծախսերի և փաստացի ծախսերի հարաբերակցության հիման վրա:

Կառուցման պայմանագրերից հասույթի ճանաչման Ընկերության քաղաքականությունը նկարագրված է ստորև՝ 3.10 կետում:

3.9.3 Ռոյալթիներ

Ռոյալթիների գծով հասույթը ճանաչվում է հաշվեգրման հիմունքով՝ համապատասխան պայմանագրի բովանդակությանը համապատասխան (պայմանով, որ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և հասույթի գումարը կարող է չափվել արժանահավատորեն): Ժամանակային հիմունքով որոշված ռոյալթիները ճանաչվում են գծային հիմունքով պայմանագրի ժամկետի ընթացքում: Ռոյալթիների համաձայնագրերը, հիմնված արտադրության, վաճառքի և այլ ցուցանիշների վրա, ճանաչվում են՝ համապատասխան համաձայնագրի հիման վրա:

3.9.4 Շահաբաժնային և տոկոսային եկամուտ

Ներդրումներից շահաբաժնային եկամուտը ճանաչվում է, երբ վճարում ստանալու բաժնետիրոջ իրավունքը հաստատված է (պայմանով, որ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և եկամտի գումարը կարող է չափվել արժանահավատորեն):

Ֆինանսական ակտիվից տոկոսային եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և եկամտի գումարը կարող է չափվել արժանահավատորեն: Տոկոսային եկամուտը ճանաչվում (հաշվեգրում) է ժամանակային համամասնության հիմունքով՝ չմարված մայր գումարի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի սկզբնական ճանաչման պահի զուտ հաշվեկշռային արժեքը:

ՀՀՄՍ 11.39(բ),(գ)

3.10 Կառուցման պայմանագրեր

Երբ կառուցման պայմանագրի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, կառուցման պայմանագրի հասույթը և ծախսումները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ պայմանագրային աշխատանքների ավարտվածության աստիճանի հիման վրա, որը չափվում է՝ հիմք ընդունելով կատարված աշխատանքների վրա կատարված մինչև տվյալ ամսաթիվը ծախսումների և պայմանագրի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությունը, բացառությամբ, երբ այդ հարաբերակցությունը չի արտացոլում իրական ավարտվածության աստիճանը: Պայմանագրային աշխատանքում փոփոխությունները, վնասապահանջներն ու խրախուսիչ վճարները հասույթում ներառվում են այնքանով, որքանով դրանց գումարը կարող է չափվել արժանահավատորեն, և դրանց ստացումը համարվում է հավանական:

Երբ կառուցման պայմանագրի արդյունքները հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, պայմանագրի հասույթը ճանաչվում է միայն պայմանագրի փաստացի այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն: Պայմանագրի ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Երբ հավանական է, որ պայմանագրի ծախսումների հանրագումարը կգերազանցի պայմանագրի հասույթի հանրագումարին, ակնկալվող վնասն անմիջապես ճանաչվում է որպես ծախս:

3.11 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

3.11.1 Ընկերությունը՝ որպես վարձատու

Ֆինանսական վարձակալության ներքո վարձակալներից ստացվելիք գումարները ճանաչվում են որպես դեբիտորական պարտք վարձակալությունում Ընկերության զուտ ներդրման գումարի չափով: Ֆինանսական վարձակալությունից եկամուտը բաշխվում է հաշվետու ժամանակաշրջաններին այնպես, որ արտացոլի Ընկերության՝ վարձակալության գծով չմարված զուտ ներդրման գծով հաստատուն պարբերական հատուցադրույք:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում: Գործառնական վարձակալության գծով բանակցելու և պայմանագիր կնքելու ընթացքում կրած սկզբնական ուղղակի ծախսումներն գումարվում են վարձակալության տված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են գծային հիմունքով վարձակալության ժամանակաշրջանում:

3.11.2 Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալության ներքո պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալության սկզբի դրությամբ դրանց իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձատուի նկատմամբ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալական վճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության չմարված մնացորդի նկատմամբ ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք: Ֆինանսական ծախսերն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դրանք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվներին, որի դեպքում դրանք կապիտալացվում են փոխառության ծախսումների գծով Ընկերության ընդհանուր քաղաքականությանը (տե՛ս 3.13 կետը ստորև) համապատասխան: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջաններում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքում, երբ խրախուսող պայմաններ են ստացվում գործառնական վարձակալության պայմանագիր կնքելու համար, այդ խրախուսող վճարները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսող պայմաններից ամբողջ օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը:

3.12 Արտարժույթային գործարքներ

Ընկերության յուրաքանչյուր առանձին կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ, կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթներով (արտարժույթ) գործարքները ճանաչվում են գործարքների օրերի դրությամբ գերակշռող փոխարժեքներով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ այդ օրվա դրությամբ գերակշռող փոխարժեքներով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են արտարժույթով արտահայտված իրական արժեքով, վերահաշվարկվում են իրական արժեքների որոշման օրերի դրությամբ գերակշռող փոխարժեքներով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում (չափվում) են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով (ինքնարժեքով), չեն վերահաշվարկվում:

Դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ.

- ապագայում արտադրության մեջ օգտագործվելու նպատակով կառուցման մեջ գտնվող ակտիվներին վերաբերող՝ արտարժույթով արտահայտված փոխառությունների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ներառվում են այդ ակտիվների ինքնարժեքում (սկզբնական արժեքում), երբ դրանք դիտվում են որպես արտարժույթով արտահայտված փոխառությունների գծով տոկոսային ծախսումների ճշտում,
- արտարժույթային որոշակի ռիսկերի հեջավորման նպատակով կնքված գործարքների գծով փոխարժեքային տարբերությունների (տե՛ս հեջի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ստորև 3.28 կետում), և
- արտերկրյա ստորաբաժանումից ստացվելիք կամ դրան վճարվելիք այն դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնց մարումը ո՛չ պլանավորված է, և ո՛չ էլ հավանական է, որ տեղի կունենա (այդպիսով կազմելով արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման մաս), որոնք սկզբնապես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և, դրամային հոդվածների մարման ժամանակ, սեփական կապիտալից վերադասակարգվում են շահույթում կամ վնասում:

3.13 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն ըստ նշանակության օգտագործման

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

կամ վաճառքի համար), ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն ըստ էության պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

ՀՀՄՍ 20.39(ա)

3.14 Պեղական շնորհներ

Պետական շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Ընկերությունը բավարարելու է այդ շնորհներին կից պայմանները, և որ այդ շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ, որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված ապագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

ՀՀՄՍ 19.120Ա(ա)

3.15 Հերաշխատանքային հատուցումների գծով ծախսումներ

Սահմանված մասհանումների հետաշխատանքային հատուցումների պլաններին կատարվող վճարումները ճանաչվում են որպես ծախս, երբ աշխատակիցները մատուցել են ծառայություններ, որոնք իրավունք են տալիս նրանց մասհանումներին:

Սահմանված հետաշխատանքային հատուցումների պլանի գծով հատուցումների տրամադրման ծախսումները որոշվում են՝ օգտագործելով «Նախատեսված հատուցման միավորի մեթոդը»՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտուարային գնահատումներ իրականացնելով: Անցյալ ծառայության արժեքը ճանաչվում է գծային հիմունքով՝ մինչև հատուցումների երաշխավորված դառնալը մնացած միջին ժամանակաշրջանում: Այնքանով, որքանով հատուցումները երաշխավորված են, անցյալ ծառայության արժեքը ճանաչվում է անմիջապես:

3.16 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնություններ

3.16.1 Ընկերության բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ

Աշխատակիցներին և նմանատիպ ծառայություններ տրամադրող այլ կողմերին կատարվող բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումները չափվում են բաժնային գործիքների՝ տրամադրման օրվա դրությամբ իրական արժեքով:

Բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների՝ տրամադրման օրվա դրությամբ որոշված իրական արժեքը ծախսագրվում է գծային հիմունքով իրավունքի առաջացման ժամանակահատվածում՝ հիմնվելով Ընկերության գնահատականի վրա այն մասին, թե, ի վերջո, ինչ քանակությամբ բաժնային գործիքների նկատմամբ է իրավունք առաջանալու, միաժամանակ, համապատասխան գումարով կրեդիտագրելով սեփական կապիտալը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը վերանայում է իր գնահատականը, թե քանի բաժնային գործիքների նկատմամբ է իրավունք առաջանալու: Սկզբնական գնահատականների վերանայման ազդեցությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում այնպես, որ կուտակային ծախսն արտացոլի վերանայված գնահատականը, միաժամանակ, համապատասխան գումարով ճշգրտելով սեփական կապիտալի՝ բաժնային գործիքներով մարվող աշխատակիցների հատուցումների պահուստ հոդվածը:

Վերը նկարագրված քաղաքականությունը կիրառվել է բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման բոլոր գործարքների նկատմամբ, որոնք տրամադրվել են 2002թ. նոյեմբերի 7-ից հետո, և որոնց նկատմամբ իրավունք է առաջացել 2005թ. հունվարի 1-ից հետո: Այլ բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով ֆինանսական հաշվետվություններում որևէ գումարներ չի ճանաչվել:

Աշխատակիցներից տարբեր այլ կողմերի հետ կատարվող բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքները չափվում են ստացված ապրանքների կամ ծառայությունների իրական արժեքով, բացառությամբ, երբ այդ իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, որի դեպքում դրանք չափվում են տրամադրված բաժնային գործիքների իրական արժեքով այն օրվա դրությամբ, երբ կազմակերպությունը ձեռք է բերում ապրանքները, կամ կոնտրագենտը մատուցում է ծառայությունը:

Դրամական միջոցներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գծով ճանաչվում է ձեռք բերված ապրանքները կամ ծառայությունները և դրանց գծով պարտավորությունը՝ պարտավորության իրական արժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մինչև պարտավորության մարումը և մարման օրվա դրությամբ՝ պարտավորության իրական արժեքը վերաչափվում է՝ դրա փոփոխությունները ճանաչելով տարվա շահույթում կամ վնասում:

3.17 Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսն իրենից ներկայացնում է ընթացիկ ժամանակաշրջանի համար վճարվելիք հարկի և հետաձգված հարկի գումարը:

3.17.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է [Համապարփակ ֆինանսական արդյունքների/ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում] ներկայացված շահույթից, քանի որ եկամտի կամ ծախսման որոշ հոդվածներ հարկման կամ նվազեցման ենթակա են այլ տարիների ընթացքում, իսկ որոշ հոդվածներ էլ ընդհանրապես հարկվող կամ նվազեցվող չեն: Ընթացիկ հարկի գծով Ընկերության պարտավորությունը հաշվարկվում է՝ օգտագործելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.17.2 Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկվող շահույթը հաշվարկելու համար օգտագործվող դրանց համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային պարտավորություններ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Այդպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի կամ էլ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի ներքո այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը չի ազդում ո՛չ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և նվազեցվում այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ բավարար չափով հարկվող շահույթի ստացումը, որը թույլ կտա, որ ակտիվն ամբողջությամբ կամ մասամբ կփոխհատուցվի:

3.17.3 Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դրանք վերաբերում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված հոդվածներին, որի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ, համապատասխանաբար, ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.18 Հիմնական միջոցներ

Ապրանքների կամ ծառայությունների արտադրության կամ մատակարարման, կամ էլ վարչական նպատակներով օգտագործման համար պահվող հողամասերն ու շենքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են իրենց վերագնահատված գումարով, ինչն իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը վերագնահատման օրվա դրությամբ՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից կորուստները: Վերագնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ:

Այս հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացած արժեքի աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում է սեփական կապիտալում, բացառությամբ այն չափով, որ հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված միևնույն ակտիվի վերագնահատման նվազումը, որի դեպքում աճը կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում նախկինում ծախսագրված նվազման չափով: Այս հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացող հաշվեկշռային արժեքի նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որքանով այն գերազանցում է այդ ակտիվի նախկին վերագնահատման հետ կապված հիմնական միջոցների վերագնահատման պահուստում առկա արժեքի աճը:

ՀՀՄՍ
16.73(ա),(բ)

Արտադրության, մատակարարման կամ վարչական նպատակների համար կառուցման ընթացքում գտնվող գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեքկումից կորուստներ: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական ծառայությունների գծով վճարներ, իսկ որակավորվող ակտիվների համար՝ նաև Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան կապիտալացված փոխառության ծախսումներ: Այս ակտիվները դասակարգվում են հիմնական միջոցների համապատասխան դասերում, երբ կառուցումն ավարտվում է, և այն պատրաստ է մտադրված օգտագործման համար: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է նույն հիմունքով, ինչպես այլ գույքային ակտիվներինը, և սկսվում է, երբ ակտիվները պատրաստ են դրանց մտադրված օգտագործման համար:

Վերագնահատված շենքերի գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ կորստում:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Տնտեսական գույքը և սարքավորումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքկումից կորուստները:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվների (բացի հողամասերից և կառուցման ընթացքում գտնվող գույքից) սկզբնական արժեքի կամ վերագնահատված արժեքի և դրանց մնացորդային արժեքի տարբերությունը գծային մեթոդով դրանց օգտակար ծառայության ընթացքում բաշխելով:

Ֆինանսական վարձակալության ներքո պահվող ակտիվների մաշվածությունը հաշվարկվում մինչև հիմունքով, ինչ որ սեփական ակտիվները, դրանց ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցների միավորը ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ, երբ չի ակնկալվում, որ ապագա տնտեսական օգուտներ կառաջանան ակտիվի շարունակական օգտագործումից:

ՀՀՄՍ 40.75(ա)

3.19 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը վարձակալական եկամուտ և (կամ) երկար ժամկետում դրա արժեքի աճից եկամուտ ստանալու նպատակով պահվող գույք է (ներառյալ այդ նպատակների համար կառուցման ընթացքում գտնվող գույքը): Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է ինքնարժեքով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտներն ու կորուստները ներառվում են շահույթում կամ վնասում այն ժամանակահատվածում, երբ դրանք առաջանում են:

Ներդրումային գույքը ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ, երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործումից, և ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում օտարումից:

3.20 Ոչ նյութական ակտիվներ

3.20.1 Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվներ

ՀՀՄՍ 38.118(բ)

Որոշակի ժամկետով օգտակար ծառայություն ունեցող՝ առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է գծային մեթոդով գնահատված օգտակար ծառայության ընթացքում: Գնահատված օգտակար ծառայությունն ու ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և գնահատման փոփոխությունների ազդեցությունը հաշվառվում է առաջընթաց հիմունքով: Անորոշ օգտակար ծառայություն ունեցող՝ առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվարկվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքկումից կորուստները:

3.20.2 Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ. հետազոտության և մշակման ծախսումներ

Հետազոտության գործունեության գծով ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվում են:

Մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ներստեղծված ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ.

- ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական

իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,

- ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,
- ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը,
- այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հավանական ապագա տնտեսական օգուտներ,
- մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը, և
- ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու իր կարողությունը:

ՀՀՄՄ 38.118(բ)

Սկզբնական ճանաչումից հետո ներստեղծված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները, միևնույն հիմունքով, ինչ որ առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները:

3.20.3 Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ, երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

3.21 Նյութական և ոչ նյութական ակտիվների, բացառությամբ գույքի, արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ որոշելու, թե արդյոք կա որևէ հայտանիշ, որ այդ ակտիվները կարող են արժեզրկված լինել: Նման հայտանիշի առկայության դեպքում գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը՝ որոշելու համար արժեզրկումից կորստի չափը: Երբ հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է ակտիվը: Եթե հնարավոր է որոշել ակտիվների բաշխման խելամիտ և հետևողական հիմք, կորպորատիվ ակտիվները նույնպես բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ միավորների այն ամենափոքր խմբին, որի համար հնարավոր է որոշել խելամիտ և հետևողական բաշխման հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան, և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկվել:

ՀՀՄՄ 2.36(ա)

3.22 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք, առաջինը ելք» (FIFO) հիմունքով: Իրացման զուտ արժեքն իրենից ներկայացնում է պաշարների գնահատված վաճառքի գինը՝ հանած գնահատված բոլոր լրամշակման ծախսումները և վաճառքի իրականացման համար անհրաժեշտ ծախսումները:

3.23 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքի արդյունք, հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը, և պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Երբ ակնկալվում է, որ որևէ երրորդ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստի մարման համար անհրաժեշտ ծախսումները, դեբիտորական պարտք ճանաչվում է որպես ակտիվ, եթե ըստ էության հաստատ է, որ ստացվելու է փոխհատուցում, և եթե ստացվելիք գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

3.23.1 Անբարենպաստ պայմանագրեր

Անբարենպաստ պայմանագրերից առաջացած ներկա պարտականությունները ճանաչվում և չափվում են որպես պահուստներ: Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե դրանով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում

են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները:

3.23.2 Վերակառուցումներ

Վերակազմավորման պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը մշակել է վերակառուցման մանրամասն ֆորմալ պլան և պլանի իրականացումը սկսելու կամ այդ պլանի հիմնական դրույթների մասին ներգրավված կողմերին տեղեկացնելու միջոցով նրանց շրջանում ստեղծել է հիմնավորված ակնկալիք, որ վերակազմավորումը կիրականացվի:

3.23.3 Երաշխիքներ

Ապրանքների տեղական վաճառքի մասին օրենսդրությամբ սահմանված երաշխիքային պարտականությունների հետ կապված ակնկալվող ծախսումների պահուստները ճանաչվում են համապատասխան արտադրանքի վաճառքի օրվա դրությամբ՝ Ընկերության պարտականության մարման համար պահանջվող ծախսումների տնօրենների լավագույն գնահատականին համապատասխան:

3.23.4 Ձեռնարկատիրական գործունեության միավորումում ձեռք բերված պայմանական պարտավորություններ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումում ձեռք բերված պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են դրանց ձեռքբերման օրվա դրությամբ իրական արժեքով: Հետագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ այդ պայմանական պարտավորությունները չափվում են հետևյալ երկու գումարներից առավելագույնով՝

ա) գումար, որը կճանաչվեր «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ին համապատասխան և

բ) սկզբնապես ճանաչված գումար՝ հանած «Հասույթ» ՀՀՄՍ 18-ին համապատասխան ճանաչված կուտակային ամորտիզացիա:

ՖՀՄՍ 7.21

3.24 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների (բացի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից ու ֆինանսական պարտավորություններից) ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները համապատասխանաբար գումարվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքին կամ հանվում դրանցից սկզբնական ճանաչման պահին: Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումներն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 7.21

3.25 Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» (ԻԱՇՎՄՁ) ֆինանսական ակտիվներ, «մինչև մարման ժամկետը պահվող» (ՄՄԺՊ) ներդրումներ, «վաճառքի համար մատչելի» (ՎՀՄ) ֆինանսական ակտիվներ և «փոխառություններ ու դեբիտորական պարտքեր»: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների բնույթից ու նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

ՖՀՄՍ 7.Բ5(ե)

3.25.1 Արդյունավետ տոկոսային մեթոդ

Արդյունավետ տոկոսային մեթոդը պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամտի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը պարտքային գործիքի ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված ապագա դրամական հոսքերը (ներառյալ բոլոր վճարված կամ ստացված վճարներն ու ծախսերը, որոնք արդյունավետ տոկոսադրույթի, գործարքի հետ կապված ծախսումների և այլ հավելավճարների կամ զեղչերի բաղկացուցիչ մասն են կազմում) ճշգրիտ կերպով զեղչում է մինչև սկզբնական ճանաչման պահի գուտ հաշվեկշռային արժեքը:

Պարտքային գործիքների, բացի որպես ԻԱՇՎՄՁ դասակարգված ֆինանսական ակտիվներից, գծով եկամուտը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույթի հիմունքով:

ՖՀՄՍ 7.Բ5(ե)

3.25.2 ԻԱՇՎԱՐՁ ֆինանսական ակտիվներ

ԻԱՇՎԱՐՁ ֆինանսական ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և վերաչափումից առաջացած օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ կորուստը ներառում է այն շահաբաժինը կամ տոկոսը, որը վաստակվել է ֆինանսական ակտիվի գծով և ներառվում է [Համապարփակ ֆինանսական արդյունքների/ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության] «այլ օգուտներ և կորուստներ» տողային հոդվածում: Իրական արժեքը որոշվում է ծանոթագրություն 40-ում նկարագրված եղանակով:

3.25.3 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք Ընկերությունը հաստատապես մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի ավարտը: Սկզբնական ճանաչումից հետո մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ՝ հանած արժեքը կումը:

3.25.4 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (ՎՀՄ ֆինանսական ակտիվներ)

Ընկերության կողմից պահվող ցուցակված մարեի պարտատոմսերը, որոնք շրջանառվում են ակտիվ շուկայում, դասակարգվում են որպես ՎՀՄ և չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընկերությունն ունի նաև չցուցակված բաժնետոմսերում ներդրումներ, որոնք չեն շրջանառվում ակտիվ շուկայում, սակայն նույնպես դասակարգվում են որպես ՎՀՄ ֆինանսական ակտիվներ և չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (քանի որ տնօրենները համարում են, որ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել): Իրական արժեքը որոշվում է ծանոթագրություն 40-ում նկարագրված եղանակով: ՎՀՄ դրամային ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում այն փոփոխությունները, որոնք կապված են արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների (տե՛ս ստորև), արդյունավետ տոկոսային մեթոդը օգտագործմամբ հաշվարկված տոկոսային եկամտի և ՎՀՄ բաժնային ներդրումների գծով շահաբաժինների հետ, ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակված են սեփական կապիտալում՝ ներդրումների վերագնահատման պահուստ վերնագրի ներքո: Երբ ներդրումն օտարվում է, կամ երբ որոշվում է, որ այն արժեքը կել է, ներդրումների վերագնահատման պահուստում նախապես կուտակված օգուտը կամ կորուստը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

ՎՀՄ բաժնային գործիքների գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ շահաբաժիններ ստանալու Ընկերության իրավունքը հաստատվում է:

ՎՀՄ դրամային ֆինանսական ակտիվների իրական արժեքն, արտահայտված արտարժույթով, որոշվում է այդ արտարժույթում և վերահաշվարկվում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գերակշռող սփոթ փոխարժեքով: Շահույթում կամ վնասում ճանաչվող փոխարժեքային օգուտները և կորուստները որոշվում են՝ հիմնվելով դրամային ակտիվի ամորտիզացված արժեքի վրա: Այլ փոխարժեքային օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

ՎՀՄ բաժնային ներդրումները, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, և ածանցյալ գործիքները, որոնք կապված են այդ չգնանշված բաժնային ներդրումների հետ և մարվում են դրանց առաքմամբ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած որոշված արժեքը կումից կորուստներ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.25.5 Փոխառություններ ու դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը (ներառյալ առևտրական և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցների մնացորդներ և այլն [նկարագրել]) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը կումը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, երբ տոկոսի ճանաչումն էական չի լինի:

3.25.6 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ֆինանսական ակտիվները, բացի ԻԱՇՎԿՁ ակտիվներից, գնահատվում (ստուգվում) են արժեզրկման հայտանիշներով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ֆինանսական ակտիվներն համարվում են արժեզրկված, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո առաջացած կամ տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերն ազդել են ներդրման գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

ՖՀՄՄ 7.Բ5(գ),
37(բ)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար ճանաչված արժեզրկումից կորստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունն է՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված նմանատիպ ֆինանսական ակտիվի ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Այդպիսի արժեզրկումից կորուստը հետագա ժամանակաշրջաններում չի հակադարձվում:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը բոլոր ֆինանսական ակտիվների համար ուղղակիորեն է նվազեցվում արժեզրկումից կորստով, բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի կիրառման միջոցով: Երբ առևտրական դեբիտորական պարտքը համարվում է անհավաքելի, այն դուրս է գրվում պահուստի հաշվին: Նախկինում դուրս գրված գումարների հետագա վերականգնումները կրեդիտագրվում են պահուստի հաշվին: Պահուստի հաշվի հաշվեկշռային արժեքում փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Երբ համարվում է, որ ՎՀՄ ֆինանսական ակտիվն արժեզրկված է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախապես ճանաչված կուտակային օգուտները կամ կորուստները վերադասակարգվում են շահույթում կամ վնասում այդ ժամանակաշրջանի ընթացքում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար, եթե հետագա ժամանակաշրջանի ընթացքում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և այդ նվազումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի հետ, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման հակադարձման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե արժեզրկումը ճանաչված չլիներ:

ՎՀՄ բաժնային արժեթղթերի գծով շահույթում կամ վնասում նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Արժեզրկումից կորստից հետո իրական արժեքում աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում <<ներդրումների վերագնահատման պահուստ>> վերնագրի ներքո:

ՎՀՄ պարտքային արժեթղթերի գծով արժեզրկումից կորուստները հետագայում հակադարձվում են շահույթի կամ վնասի միջոցով, եթե ներդրման իրական արժեքում աճը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո առաջացող դեպքի հետ:

3.25.7 Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն այն ժամանակ, երբ ակտիվից դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքների ժամկետը լրանում է, կամ, երբ ֆինանսական ակտիվը և դրա սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները (հատույցները) փոխանցվում են մեկ այլ կազմակերպության: Եթե Ընկերությունը չի փոխանցում և ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, Ընկերությունը ճանաչում է ակտիվում իր պահպանած մասնակցությունը (շարունակվող ներգրավվածությունը) և այն գումարների գծով համապատասխան պարտավորությունը, որոնք նա կարող է ստիպված լինել վճարել: Եթե Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտներն, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, իսկ ստացված մուտքերը ճանաչում է որպես գրավով ապահովված փոխառություն:

Ֆինանսական ակտիվի ամբողջական ապաճանաչման ժամանակ ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված կամ ստացվելիք հատուցման գումարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կուտակային օգուտի կամ կորստի

միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի ոչ ամբողջական ապաճանաչման ժամանակ (օրինակ, երբ Ընկերությունը պահպանում է օպցիոն՝ հետ գնելու փոխանցված ակտիվի մի մասը կամ պահպանում է մնացորդային մասնակցություն, որը չի հանգեցնում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերի ու օգուտների պահպանմանը, և Ընկերությունը պահպանում է վերահսկողությունը), Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որը շարունակում է ճանաչել շարունակական ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այլևս չի ճանաչում փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասին բաշխված հաշվեկշռային արժեքի և դրա դիմաց ստացված հատուցման գումարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված դրանում բաշխված ցանկացած կուտակային օգուտի կամ վնասի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը բաշխվում է այն մասի, որը շարունակում է ճանաչվել, և այն մասի միջև, որն այլևս չի ճանաչվում՝ այդ մասերի համեմատական իրական արժեքների հիման վրա:

ՖՃՄՄ 7.21

3.26 Ֆինանսական պարտավորություններ և բաժնային գործիքներ

3.26.1 Որպես պարտավորություն կամ սեփական կապիտալ դասակարգումը

Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են կա՛մ որպես ֆինանսական պարտավորություններ, կա՛մ էլ որպես սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան:

3.26.2 Բաժնային գործիքներ

Բաժնային գործիքը պայմանագիր է, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացած ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք: Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները ճանաչվում են ստացված մուտքերի հիման վրա՝ հանած թողարկմանը ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Ընկերության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ որպես վերջինիս նվազեցում: Ընկերության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ մարման գծով շահույթում կամ վնասում որևէ օգուտ կամ կորուստ չի ճանաչվում:

3.26.3 Բաղադրյալ գործիքներ

Ընկերության կողմից թողարկված բաղադրյալ գործիքների (փոխարկելի պարտատոմսերի) բաղադրիչ մասերն առանձին դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ և սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան: Փոխարկման օպցիոնը, որը մարվելու է ֆիքսված գումարով դրամական միջոցները կամ այլ ֆինանսական ակտիվը ֆիքսված քանակով Ընկերության սեփական բաժնային գործիքներով փոխանակելով, բաժնային գործիք է:

Թողարկման ամսաթվի դրությամբ պարտավորության բաղադրիչի իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով նմանատիպ ոչ փոխարկելի գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքը: Այս գումարը գրանցվում է որպես պարտավորություն ամրոտիզացված արժեքի հիմունքով արդյունավետ տոկոսային մեթոդի օգտագործմամբ մինչև դրա մարումը՝ փոխարկման պահին կամ գործիքի մարման ժամկետի ավարտին:

Որպես սեփական կապիտալ դասակարգված փոխարկման օպցիոնի արժեքը որոշվում է ամբողջական բաղադրյալ գործիքի իրական արժեքից հանելով պարտավորության բաղադրիչի գումարը: Սա ճանաչվում և ներառվում է սեփական կապիտալում՝ համապատասխան շահութահարկը հանած հիմունքով, և հետագայում չի վերաչափվում: Բացի այդ, որպես սեփական կապիտալ դասակարգված փոխարկման օպցիոնը մնալու է սեփական կապիտալում մինչև փոխարկման օպցիոնը կիրագործվի, որի դեպքում սեփական կապիտալում ճանաչված մնացորդը կփոխանցվի [էմիսիոն եկամտին / սեփական կապիտալի այլ հոդվածի [նկարագրել]]: Եթե փոխարկման օպցիոնը փոխարկելի պարտատոմսի մարման ամսաթվի դրությամբ մնում է չիրագործված, ապա սեփական կապիտալում ճանաչված մնացորդը փոխանցվում է [չբաշխված շահույթ/ սեփական կապիտալի այլ հոդվածի [նկարագրել]]: Փոխարկման պահին կամ փոխարկման օպցիոնի ժամկետը լրանալիս շահույթում կամ վնասում որևէ օգուտ կամ կորուստ չի ճանաչվում:

Փոխարկելի պարտատոմսերի թողարկմանը վերաբերող գործարքի հետ կապված ծախսումները

բաշխվում են պարտավորության և սեփական կապիտալի բաղադրիչներին՝ համախառն մուտքերի բաշխման համամասնությամբ: Սեփական կապիտալի բաղադրիչին վերաբերող գործարքի հետ կապված ծախսումներն ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Պարտավորության բաղադրիչին վերաբերող գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են պարտավորության բաղադրիչի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են փոխարկելի պարտատոմսերի ժամկետի ընթացքում օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

3.26.4 Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կա'մ որպես «ԻԱՇՎՄՁ» ֆինանսական պարտավորություններ, կա'մ էլ որպես «այլ ֆինանսական պարտավորություններ»:

3.26.4.1 ԻԱՇՎՄՁ ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը, բացի առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններից, սկզբնական ճանաչման պահին կարող է նախորոշվել (նախատեսվել) որպես ԻԱՇՎՄՁ, եթե.

- այդպիսի նախորոշումը (նախատեսումը) վերացնում է կամ էականորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որն այլապես կարող էր առաջանալ, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների և (կամ) ֆինանսական պարտավորությունների խմբի մաս, և այդ խումբը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով: Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարությանը համապատասխան, և Ընկերությունում ներքին տեղեկատվությունն այդ խմբի վերաբերյալ տրամադրվում է այդ նույն հիմունքով, կամ
- այն մաս է կազմում մի պայմանագրի, որը ներառում է մեկ կամ ավելի պարունակվող ածանցյալ գործիքներ, և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումն ու չափումը» ՀՀՄՍ 39-ով թույլատրվում է, որ ամբողջ հիբրիդային պայմանագիրը (ակտիվ կամ պարտավորություն) նախորոշվի որպես ԻԱՇՎՄՁ:

ՖՀՄՍ 7.Բ5(ե)

ԻԱՇՎՄՁ ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով, և վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ կորուստն ընդգրկում է ֆինանսական պարտավորության գծով վճարված տոկոսները (եթե այդպիսիք կան) և ներառվում է [Համապարփակ ֆինանսական արդյունքների/ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության]«այլ օգուտներ և կորուստներ» տողային հոդվածում: Իրական արժեքը որոշվում է ծանոթագրություն 40-ում նկարագրված եղանակով:

3.26.4.2 Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ փոխառությունները) հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

Արդյունավետ տոկոսային մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային ծախսի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական պարտավորության ակնկալվող ժամկետի կամ (համապատասխան դեպքերում) ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված ապագա դրամական վճարումները (ներառյալ բոլոր վճարված կամ ստացված վճարներն ու ծախսերը, որոնք արդյունավետ տոկոսադրույքի, գործարքի հետ կապված ծախսումների և այլ հավելավճարների կամ զեղչերի բաղկացուցիչ մասն են կազմում) ճշգրիտ կերպով զեղչում է մինչև սկզբնական ճանաչման պահի զուտ հաշվեկշռային արժեքը:

3.26.4.3 Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը պայմանագիր է, որով թողարկողից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար պայմանագրի տիրապետողի վնասը, որը նա կրում է՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմաններին համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ընկերության կողմից թողարկված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և, եթե նախորոշված չեն որպես ԻԱՇՎԱՄՁ, հետագայում չափվում են հետևյալ երկու գումարներից առավելագույնով.

- պայմանագրի ներքո պարտականության գումարը՝ որոշված «Պահուստներ, պայմանական պարտավորություններ ու պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ին համապատասխան, և
- սկզբնապես ճանաչված գումար՝ հանած, երբ տեղին է, հասույթի ճանաչման քաղաքականությանը համապատասխան ճանաչված կուտակային ամորտիզացիան:

3.26.4.4 Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորություններն այն և միայն այն դեպքում, երբ Ընկերության պարտականությունները կատարվում, չեղյալ են հայտարարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 7.21

3.27 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Տոկոսադրույքային և արտարժույթային ռիսկերին իր ենթարկվածությունը կառավարելու համար ընկերությունը կնքում է բազմազան ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ արտարժույթային ֆորվարդային պայմանագրերը, տոկոսադրույքային և արտարժույթային սվոպերը: Ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ հավելյալ մանրամասները բացահայտված են ծանոթագրություն 40-ում:

Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ ածանցյալ պայմանագրերը կնքվում են, և հետագայում վերաչափվում դրանց իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արդյունքում առաջացած օգուտը կամ կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ ածանցյալ գործիքը նախորոշված և արդյունավետ հեջավորման գործիք է, որի դեպքում շահույթում կամ վնասում ճանաչման ժամկետը կախված է հեջավորման փոխհարաբերության բնույթից:

3.27.1 Պարունակվող ածանցյալ գործիքներ

Ոչ ածանցյալ «հիմնական» պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները դիտվում են որպես առանձին ածանցյալներ, երբ դրանց ռիսկերն ու բնութագրերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրերին ռիսկերի և բնութագրերի հետ, և «հիմնական» պայմանագրերը չեն չափվում ԻԱՇՎԱՄ-ով:

ՖՀՄՍ 7.21

3.28 Հեջի հաշվապահական հաշվառումը

3.28.1 Իրական արժեքի հեջեր

Որպես իրական արժեքի հեջեր նախորոշված և հեջի հաշվապահական հաշվառման պահանջները բավարարող ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություններն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ հեջավորված ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի՝ հեջավորված ռիսկին վերագրելի փոփոխությունների հետ միասին: Հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխությունը և հեջավորված ռիսկին վերագրելի հեջավորված հոդվածի փոփոխությունը ճանաչվում են [Համապարփակ ֆինանսական արդյունքների/ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության] հեջավորված հոդվածին վերաբերող տողում:

Հեջի հաշվապահական հաշվառումը դադարեցվում է, երբ Ընկերությունը չեղյալ է հայտարարում հեջավորման փոխհարաբերությունը, երբ հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում է, դադարեցվում կամ իրագործվում է, կամ այն այլևս չի բավարարում հեջի հաշվառման պահանջները: Հեջավորված ռիսկից առաջացող հեջավորված հոդվածի հաշվեկշռային արժեքում իրական արժեքի գծով ճշգրտումներն ամորտիզացվում են շահույթին կամ վնասին՝ այդ ամսաթվից սկսած:

3.28.2 Դրամական միջոցների հոսքերի հեջեր

Որպես դրամական միջոցների հոսքերի հեջեր նախորոշված և հեջի հաշվապահական հաշվառման պահանջները բավարարող ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունների արդյունավետ մասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստ վերնագրի ներքո: Ոչ արդյունավետ մասին վերաբերող օգուտը կամ կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում և ներառվում է «այլ օգուտներ և կորուստներ» տողային հոդվածում:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախապես ճանաչված և սեփական կապիտալում կուտակված գումարները վերադասակարգվում են շահույթին կամ վնասին այն ժամանակաշրջաններում, երբ հեջավորված հոդվածն է ճանաչվում շահույթում կամ վնասում, ընդ որում, ներկայացվում է համապարփակ ֆինանսական արդյունքների/ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության միևնույն տողում, որում ներկայացվում է հեջավորված հոդվածը: Այնուամենայնիվ, երբ հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախապես ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտներն ու կորուստները փոխանցվում են սեփական կապիտալից և ներառվում ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության սկզբնական արժեքի սկզբնական չափման մեջ:

Հեջի հաշվապահական հաշվառումը դադարեցվում է, երբ Ընկերությունը չեղյալ է հայտարարում հեջավորման փոխհարաբերությունը, երբ հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում է, դադարեցվում կամ իրագործվում է, կամ այն այլևս չի բավարարում հեջի հաշվառման պահանջները: Այդ ժամանակ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտը կամ կորուստը մնում է սեփական կապիտալում և ճանաչվում այն ժամանակ, երբ կանխատեսված գործարքն ի վերջո ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ այլևս չի ակնկալվում, որ կանխատեսված գործարքը տեղի է ունենալու, սեփական կապիտալում կուտակված օգուտը կամ կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.28.3 Արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրումների հեջեր

Արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրումների հեջերը հաշվառվում են դրամական միջոցների հոսքերի հեջերին համանման եղանակով: Հեջավորման գործիքից գծով՝ հեջի արդյունավետ մասին վերաբերող օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում արտարժույթի վերահաշվարկման պահուստ վերնագրի ներքո: Ոչ արդյունավետ մասին վերաբերող օգուտը կամ կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում և ներառվում է «այլ օգուտներ և կորուստներ» տողային հոդվածում:

Արտարժույթի վերահաշվարկման պահուստում կուտակված հեջի արդյունավետ մասի հետ կապված հեջավորման գործիքից օգուտները կամ կորուստները վերադասակարգվում են շահույթին կամ վնասին՝ արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ:

4. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

4.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելիս կատարված կարևոր դատողությունները

Ստորև բերված են այն կարևոր (առանցքային) դատողությունները, բացի գնահատումներ պարունակողներից (տե՛ս 4.2 կետը ստորև), որոնք կատարվել են տնօրենների կողմից Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելիս, և որոնք ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա ամենաէական ազդեցությունը:

ՀՄՍ 1.122

4.1.1 Հասույթի ճանաչումը

Ծանոթագրություն 13.6-ը նկարագրում է Ընկերության խոշոր գնորդներին մատակարարված ապրանքների գծով կատարված թերությունների վերացման աշխատանքների համար տարվա ընթացքում պահանջվող ծախսերը: Այս ապրանքներն առաքվել են գնորդին 2010թ. հունվարից հուլիս ամիսներին, և դրանից քիչ ժամանակ անց թերություններ են բացահայտվել գնորդի կողմից: Բանակցություններից արդյունքում աշխատանքների գրաֆիկ է սահմանվել, որն ընդգրկելու է մինչև 2012թ. Ընկերության կողմից կատարվելիք ծախսումները: Հաշվի առնելով նշված խնդիրները՝ տնօրեններից պահանջվում էր որոշել՝ արդյոք տեղին էր ընթացիկ տարում ճանաչել այդ գործարքներից 19 մլն ԴՄ-ի հասույթը՝ համաձայն հասույթի ճանաչման Ընկերության ընդհանուր քաղաքականությանը, երբ ապրանքն առաքվում է, թե արդյոք ավելի տեղին կլիներ հետաձգել այդ ճանաչումը մինչև թերությունների վերացման աշխատանքների ավարտումը:

Իրենց դատողություններն իրականացնելիս տնօրենները դիտարկել են «Հասույթ» ՀՀՄՄ 18-ում սահմանված ապրանքների վաճառքից հասույթի ճանաչման մանրամասն չափանիշները, մասնավորապես, այն, թե արդյոք Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու օգուտները: Թերությունների վերացման աշխատանքների գծով Ընկերության պարտավորության մանրակրկիտ քանակական գնահատման արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով հետագա աշխատանքներ կամ ապրանքների փոխարինում պահանջելու գնորդի իրավունքների սահմանափակության վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը, տնօրենները գտնում են, որ էական ռիսկերն ու օգուտները փոխանցվել են, և որ ընթացիկ տարում հասույթի ճանաչումը տեղին է՝ թերությունների վերացման ծախսումների գծով համապատասխան պահուստի ճանաչման հետ մեկտեղ:

4.1.2 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ

Տնօրենները վերանայել են Ընկերության՝ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվները՝ իր կապիտալի պահպանման և իրացվելիության պահանջների տեսանկյունից և հաստատել են այդ ակտիվները մինչև մարման ժամկետը պահելու Ընկերության հաստատական մտադրությունը և կարողությունը: Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը 5.905 մլն ԴՄ է (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 4.015 մլն ԴՄ): Այս ակտիվների մանրամասները շարադրված են ծանոթագրություն 22-ում:

ՀՀՄՄ 1.125, 129

4.2 Գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ստորև բերված են ապագայի վերաբերյալ առանցքային ենթադրությունները և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրները, որոնց գծով առկա է զգալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների:

4.2.1 Ներստեղծված ոչ նյութական ակտիվի փոխհատուցելիությունը

Տարվա ընթացքում տնօրենները վերանայել են Ընկերության էլեկտրոնային բիզնեսի մշակումից առաջացած ներստեղծված ոչ նյութական ատիվի փոխհատուցելիությունը, որը ներառված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 0.5 մլն ԴՄ գումարով (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 0.5 մլն ԴՄ):

Ծրագիրը շարունակում է զարգանալ շատ գոհացուցիչ կերպով, և գնորդների արձագանքները վերահաստատել են ծրագրից ակնկալվող հասույթի՝ տնօրենների նախկին գնահատականները: Այնուամենայնիվ, աճող մրցակցային գործունեությունը ստիպել է տնօրեններին վերանայել իրենց ենթադրությունները՝ կապված ապագա շուկայի բաժնի և այս ապրանքների գծով նախատեսված շահութաբերության նորմաների հետ: Իրականացվել է զգայունության մանրամասն վերլուծություն, և տնօրենները վստահ են, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը լիովին փոխհատուցվելու է, նույնիսկ, եթե հասույթները նվազեն: Այս վիճակը մանրակրկիտ մշտադիտարկման կենթարկվի, և ապագա ժամանակաշրջաններում կկատարվեն ճշգրտումներ, եթե հետագա շուկայական գործունեությունը ցույց տա, որ այդպիսի ճշգրտումներ անելը տեղին է:

4.2.2 Գուդվիլի արժեզրկումը

Որոշելու համար, թե արդյոք գուդվիլն արժեզրկված է, անհրաժեշտ է գնահատել այն դրամաստեղծ միավորների օգտագործման արժեքը, որոնց վերագրվել է (բաշխվել է) գուդվիլը: Օգտագործման արժեքի հաշվարկման համար անհրաժեշտ է, որ տնօրենները գնահատեն դրամաստեղծ միավորից ակնկալվող ապագա դրամական հոսքերը, ինչպես նաև որոշեն համապատասխան գեղջման դրույք ներկա արժեքը հաշվարկելու համար:

2010թ. ընթացքում 235,000 ԴՄ արժեզրկումից կորուստ(2009թ.՝ զրո) ճանաչվելուց հետո 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գուդվիլի հաշվեկշռային արժեքը կազմում էր 20.3 մլն ԴՄ (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 24.1 մլն ԴՄ): Արժեզրկումից կորստի հաշվարկման մանրամասները բերված են ծանոթագրություն 17-ում:

4.2.3 Հիմնական միջոցների օգտակար ծառայությունները

Ինչպես նկարագրված է 3.18 կետում, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը վերանայում է հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայությունը: Ընթացիկ տարում տնօրենները որոշել են, որ գույքի որոշակի միավորների օգտակար ծառայությունը պետք է կրճատել՝ տեխնոլոգիաների զարգացման պատճառով:

Գնահատականների այս վերանայման ֆինանսական ազդեցությունն այն է, որ ակտիվները մինչև իրենց գնահատված օգտակար ծառայության ավարտը պահելու դեպքում, ընթացիկ ֆինանսական տարում և հաջորդ 3 տարիների համար՝ մաշվածության գծով ծախսը կավելանա հետևյալ գումարներով.

	Հազ. դրամ
2010	879
2011	607
2012	144
2013	102

4.2.4 Ֆինանսական գործիքների գնահատումը

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 40-ում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ, որոնք ներառում են ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա՝ գնահատելու ֆինանսական գործիքների որոշակի տեսակների իրական արժեքը: Ծանոթագրություն 40-ը տրամադրում է ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման մեջ կիրառվող առանցքային ենթադրությունների մասին մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև այս ենթադրությունների զգայունության մանրամասն վերլուծություն:

Տնօրենները գտնում են, որ ընտրված գնահատման մեթոդներն ու կիրառվող ենթադրությունները տեղին են ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու գործում:

ՀՀՄՍ 18.35(բ)

5. Հասույթ

Ստորև բերված է շարունակվող գործունեությունից Ընկերության տարվա հասույթի վերլուծությունը (բացառությամբ ներդրումային եկամտի. տե՛ս ծանոթագրություն 7):

		31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտ- ված տարի
		Հազ. դրամ	Հազ. դրամ
ՀՀՄՍ 18.35(բ)	Հասույթ ապրանքների վաճառքից	119,232	128,852
ՀՀՄՍ 18.35(բ)	Հասույթ ծառայությունների մատուցումից	16,388	18,215
ՀՀՄՍ 11.39(ա)	Հասույթ կառուցման պայմանագրից	5,298	4,773
		<u>140,918</u>	<u>151,840</u>

ՖՀՄՍ 7.23(դ)

Ապրանքների վաճառքից Ընկերության արտարժույթով արտահայտված հասույթի մի մասը հեջավորված դրամական հոսքերի գծով: Ապրանքների վաճառքից հասույթի վերոնշյալ գումարները ներառում են արտարժույթային հասույթների հեջավորման համար օգտագործվող արտարժույթային ածանցյալ գործիքների արդյունավետ գումարի վերադասակարգումը (2010թ.՝-

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

մին ԴՄ, 2009թ.՝ – մին ԴՄ):

Ծանոթագրություն 6.5-ում ներկայացված է հասույթի վերլուծությունը ըստ արտադրանքների և ծառայությունների խոշոր տեսակների:

6. Սեզմենտային տեղեկատվություն

6.1 Արտադրանքներ և ծառայություններ, որոնցից ստացվում են հաշվետու սեզմենտների հասույթները

ՖՀՄՍ 8.22

Ռեսուրսների բաշխման և սեզմենտի գործունեության արդյունքի գնահատման նպատակով գլխավոր գործառնական որոշում կայացնողին զեկուցվող (ներկայացվող) տեղեկատվությունը կենտրոնացած է առաքված կամ տրամադրված ապրանքների կամ ծառայությունների տեսակների վրա: Ըստ այդմ էլ, ՖՀՄՍ 8-ի համաձայն Ընկերության հաշվետու սեզմենտները հետևյալն են.

- Էլեկտրոնային սարքավորումներ՝
 - ուղղակի վաճառք
 - մեծածախ վաճառք
 - ինտերնետային վաճառք
- Ժամանցի կազմակերպման ապրանքներ՝ -մեծածախ վաճառք
- մանրածախ առևտրի կետեր

Ժամանցի կազմակերպման ապրանքների սեզմենտները մատակարարում են սպորտային կոշիկներ և սարքավորում, ինչպես նաև դրսի խաղերի կազմակերպման համար նախատեսված սարքավորում:

- Համակարգչային ծրագրեր՝ - Համակարգչային ծրագրային ապահովման տեղադրում մասնագիտացված բիզնես հավելվածների (ծրագրերի) համար:
- Շինարարություն՝ - բնակելի շենքերի կառուցում:

Երկու գործունեություն (խաղալիքների և հեծանիվների արտադրություն և վաճառք) ընդհատվել են ընթացիկ տարում: Հաջորդ էջերում ներկայացված սեզմենտային տեղեկատվությունը չի ներառում ծանոթագրություն 11-ում մանրամասն նկարագրված այս ընդհատված գործունեության գումարները:

ՖՀՄՍ 8.23, 23(ա)

6.2 Սեզմենտի հասույթներ և արդյունքներ

Ստորև բերված են Ընկերության շարունակվող գործունեությունից հասույթի և արդյունքների վերլուծությունն ըստ հաշվետու սեզմենտների.

	Սեզմենտի հասույթ		Սեզմենտի շահույթ	
	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Էլեկտրոնային սարքավորումներ՝				
- ուղղակի վաճառք	37,509	39,641	6,619	9,331
- մեծածախ վաճառք	20,194	22,534	6,618	5,954
-ինտերնետային վաճառքներ	27,563	29,699	6,632	5,348
Ժամանցի կազմակերպման ապրանքներ՝				
- մեծածախ վաճառք	13,514	18,332	3,252	4,110
- մանրածախ առևտրի կետեր	20,452	18,646	4,921	4,372
Համակարգչային ծրագրեր	16,388	18,215	3,201	5,260
Շինարարություն	5,298	4,773	389	1,500

ՖՀՄՍ 8.28(ա)

Ընդամենը շարունակվող գործունեությունից	140,918	151,840	31,632	35,875
--	---------	---------	--------	--------

Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմասը			1,186	1,589
--	--	--	-------	-------

ՖՀՄՍ-ների համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Նախկին ասոցիացված կազմակերպությունում ներդրման օտարումից ճանաչված օգուտ	581	-
Ներդրումային եկամուտ	3,608	2,351
Այլ օգուտներ և կորուստներ	647	1,005
Կենտրոնական վարչական ծախսեր և տնօրենների աշխատավարձեր	(2,933)	(2,666)
Ֆինանսական ծախսեր	(4,418)	(6,023)
ՖՀՄՍ 8.28(բ) Շահույթ մինչև հարկումը (ջարունակվող գործունեություն)	30,303	32,131

ՖՀՄՍ 8.23(բ) Վերը ներկայացված սեզմենտային հասույթն արտաքին հաճախորդներից ստացված հասույթն է: Ընթացիկ տարում միջսեզմենտային վաճառքներ չեն եղել(2009թ.՝ զրո):

ՖՀՄՍ 8.27 Հաշվետու սեզմենտների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները նույնն են, ինչ որ ծանոթագրություն 3-ում նկարագրված Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Սեզմենտի շահույթը ներկայացնում է յուրաքանչյուր սեզմենտից ստացված շահույթն՝ առանց կենտրոնական վարչական ծախսումների և տնօրենների աշխատավարձերի բաշխման, ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմասի, նախկին ասոցիացված կազմակերպությունում ներդրման օտարումից ճանաչված օգուտի, ներդրումային եկամտի, այլ օգուտների և կորուստների, ֆինանսական ծախսումների և շահութահարկի գծով ծախսերի: Սա այն ցուցանիշն է, որը զեկուցվում (ներկայացվում) է գլխավոր գործառնական որոշում կայացնողին՝ ռեսուրսների բաշխման և սեզմենտի գործունեության արդյունքի գնահատման նպատակներով:

6.3 Սեզմենտի ակտիվներ և պարտավորություններ

	<u>31/12/10</u>	<u>31/12/09</u>	<u>01/01/09</u>
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
ՖՀՄՍ 8.23, 28(գ) Սեզմենտի ակտիվներ			
Էլեկտրոնային սարքավորումներ՝			
- ուղղակի վաճառք	51,100	47,268	55,345
- մեծածախ վաճառք	48,596	36,061	51,082
- ինտերնետային վաճառքներ	42,648	32,817	44,697
Ժամանցի կազմակերպման ապրանքներ՝			
- մեծածախ վաճառք	29,851	33,942	31,926
-մանրածախ առևտրի կետեր	16,300	29,959	22,458
Համակարգչային ծրագրեր	16,732	14,873	12,661
Շինարարություն	11,724	23,408	14,011
Ընդամենը սեզմենտի ակտիվներ	<u>216,951</u>	<u>218,328</u>	<u>232,180</u>
Խաղալիքների և հեծանիվների գործունեությանը վերաբերող ակտիվներ (այժմ ընդհատված)	22,336	19,272	19,429
Սեզմենտներին չբաշխված ակտիվներ	29,138	25,898	21,008
Ընդամենը ակտիվներ	<u>268,425</u>	<u>263,498</u>	<u>272,617</u>
ՖՀՄՍ 8.23, 28(դ) Սեզմենտի պարտավորություններ			
Էլեկտրոնային սարքավորումներ՝			
- ուղղակի վաճառք	6,314	6,487	13,380
- մեծածախ վաճառք	4,935	3,422	10,123
- ինտերնետային վաճառքներ	3,783	3,784	8,862
Ժամանցի կազմակերպման ապրանքներ՝			
- մեծածախ վաճառք	3,152	3,262	5,125
-մանրածախ առևտրի կետեր	2,278	2,581	5,125
Համակարգչային ծրագրեր	1,266	1,565	3,567
Շինարարություն	1,433	1,832	5,655
Ընդամենը սեզմենտի պարտավորություններ	<u>23,161</u>	<u>22,933</u>	<u>51,837</u>
Խաղալիքների և հեծանիվների գործունեությանը	3,684	4,982	8,338

ՖՀՄՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

վերաբերող պարտավորություններ (այժմ ընդհատված)			
Սեզամենտներին չբաշխված պարտավորություններ	69,783	68,621	70,978
Ընդամենը պարտավորություններ	96,628	96,536	131,153

6.4 Այլ սեզամենտային տեղեկավորություն

ՖՀՄՄ 8.23(ե), 24(բ)

	Մաշվածություն և ամորտիզացիա		Ոչ ընթացիկ ակտիվների ավելացումներ	
	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Էլեկտրոնային սարքավորումներ՝				
- ուղղակի վաճառք	2,097	2,039	4,201	2,144
- մեծածախ վաճառք	2,076	2,466	1,770	1,023
- ինտերնետային վաճառքներ	2,067	2,329	3,205	2,024
Ժամանցի կազմակերպման ապրանքներ՝				
- մեծածախ վաճառք	2,014	2,108	5,880	1,547
- մանրածախ առևտրի կետեր	1,889	3,240	4,234	2,901
Համակարգչային ծրագրեր	756	1,326	2,195	1,901
Շինարարություն	294	370	500	384
	11,193	13,878	21,985	11,924

ՖՀՄՄ 8.23(զ)

Ի լրումն վերոնշյալ մաշվածությանն ու ամորտիզացիային՝ հիմնական միջոցների և գույվիլի գծով ճանաչվել է արժեզրկումից կորուստ համապատասխանաբար 1,204 հազ. ԴՄ (2009թ.՝ զրո) և 235 հազ. ԴՄ (2009թ.՝ զրո): Այդ արժեզրկումից կորուստները վերագրվել են հետևյալ հաշվետու սեզամենտներին:

Հազ. դրամ

Տարվա համար ճանաչված արժեզրկումից կորուստ հիմնական միջոցների գծով

Էլեկտրոնային սարքավորումներ՝	
- ուղղակի վաճառք	529
- մեծածախ վաճառք	285
- ինտերնետային վաճառքներ	390
	1,204

Տարվա համար ճանաչված արժեզրկումից կորուստ գույվիլի գծով

Շինարարություն	235
----------------	-----

ՖՀՄՄ 8.23(զ)

Ծանոթագրություն 13.6-ում բացահայտված 4.17 միլիոն ԴՄ-ի (2009թ. զրո) թերությունների վերացման ծախսումները վերաբերում են «Էլեկտրոնային սարքավորումներ, ուղղակի վաճառք» հաշվետու սեզամենտին:

6.5 Հասույթն ըստ արտադրանքների և ծառայությունների խոշոր խմբերի

ՖՀՄՄ 8.32

Ստորև բերված է Ընկերության շարունակական գործունեությունից հասույթի վերլուծությունն ըստ արտադրանքների և ծառայությունների խոշոր խմբերի:

	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ
Էլեկտրոնային սարքավորումներ	85,266	91,874
Սպորտային կոշիկներ և սարքավորումներ	21,003	22,850

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Դրսի խաղերի կազմակերպման սարքավորումներ	12,963	14,128
Համակարգչային ծրագրերի տեղադրում	16,388	18,215
Շինարարություն	5,298	4,773
	<u>140,918</u>	<u>151,840</u>

6.6 Աշխարհագրական տեղեկատվություն

Ընկերությունը գործունեություն է ծավալում երեք հիմնական աշխարհագրական տարածաշրջաններում՝ Հայաստանում (Ընկերության գտնվելու երկիրը), Բ երկրում և Գ երկրում:

Գործունեության տեղակայմամբ արտաքին հաճախորդներից Ընկերության շարունակական գործունեությունից հասույթի մասին և ակտիվների տեղակայմամբ Ընկերության ոչ ընթացիկ ակտիվների մասին տեղեկատվությունը մանրամասնված է ստորև:

ՖՀՄՍ
8.33(ա),(բ)

	Հասույթ արտաքին հաճախորդներից		Ոչ ընթացիկ ակտիվներ*	
	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի	31/12/10	31/12/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Հայաստան	84,202	73,971	98,453	119,152
Բ երկիր	25,898	43,562	21,411	25,745
Գ երկիր	25,485	25,687	16,085	19,341
Այլ երկրներ	5,333	8,620	5,826	8,809
	<u>140,918</u>	<u>151,840</u>	<u>141,775</u>	<u>173,047</u>

* Ոչ ընթացիկ ակտիվները չեն ներառում խաղալիքների և հեծանիվների գործունեությանը վերաբերող ակտիվները և որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները, ինչպես նաև ֆինանսական գործիքները, հետաձգված հարկային ակտիվները, հետաշխատանքային հատուցումների գծով ակտիվները և ապահովագրության պայմանագրերից բխող ակտիվները:

6.7 Խոշոր հաճախորդների մասին տեղեկատվություն

ՖՀՄՍ 8.34

Էլեկտրոնային սարքավորումների ուղղակի վաճառքից հասույթի 37.5 մլն ԴՄ (2009թ.՝ 39.6 մլն ԴՄ) (տե՛ս 6.2 կետը վերը) գումարից մոտավորապես 25.6 մլն ԴՄ (2009թ.՝ 19.8 մլն ԴՄ) հասույթը Ընկերության խոշորագույն հաճախորդին կատարված վաճառքներից է: Որևէ այլ առանձին հաճախորդին վաճառքներից հասույթն Ընկերության հասույթում չի կազմում 10% կամ ավելի ինչպես 2010թ., այնպես էլ 2009թ. ընթացքում:

7. Ներդրումային եկամուտ

	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ
Շարունակվող գործունեություն		
Վարձակալական եկամուտ՝		
Ֆինանսական վարձակալության գծով պայմանական վարձավճարներից եկամուտ	-	-
Գործառնական վարձակալության գծով վարձավճարներից եկամուտ՝		
Ներդրումային գույք	18	14
Պայմանական վարձավճարներից եկամուտ	-	-
Այլ [նկարագրել]	-	-
	<u>18</u>	<u>14</u>

ՀՀՄՍ 17.47(ե)

ՀՀՄՍ 40.75(զ)

ՀՀՄՍ 17.56(բ)

ՀՀՄՍ 18.35(բ)

Տոկոսային եկամուտ՝

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

	Բանկային ավանդներ	1,650	541
	Վաճառքի համար մատչելի ներդրումներ	154	98
	Այլ փոխառություններ և դեբիտորական պարտքեր	66	5
	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	445	410
ՖՀՄՍ 7.20(դ)	Արժեզրկված ֆինանսական ակտիվներ	-	-
		<u>2,315</u>	<u>1,054</u>
ՀՀՄՍ 18.35(բ)	Ռոյալթիներ	79	28
ՀՀՄՍ 18.35(բ)	Շահաբաժիններ բաժնային գործիքներից	156	154
	Այլ (ոչ էական հոդվածներն ընդհանուր վերցրած)	<u>1,040</u>	<u>1,101</u>
		<u>3,608</u>	<u>2,351</u>

Ստորև բերված է ֆինանսական ակտիվների գծով վաստակված ներդրումային եկամտի վերլուծությունն՝ ակտիվների կատեգորիաների.

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ Փոխառություններ և դեբիտորական պարտքեր (ներառյալ դրամական միջոցների մնացորդները)	154	98	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	<u>1,716</u>	<u>546</u>	
ՖՀՄՍ 7.20(բ)	Ընդամենը տոկոսային եկամուտ՝ այն ֆինանսական ակտիվների գծով, որոնք նախորոշված չեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	445	410
	2,315	1,054	
Շահաբաժնային եկամուտ՝ վաստակված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	156	154	
Ներդրումային եկամուտ՝ վաստակված ոչ ֆինանսական ակտիվների գծով	<u>1,137</u>	<u>1,143</u>	
	<u>3,608</u>	<u>2,351</u>	

Որպես «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ֆինանսական ակտիվների հետ կապված եկամուտը ներառված է «այլ օգուտներ և կորուստներ»-ում՝ ծանոթագրություն 8-ում:

8. Այլ օգուտներ և կորուստներ

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ	
Շարունակվող գործունեություն			
ՀՀՄՍ 1.98(գ)	Օգուտ (կորուստ) հիմնական միջոցների օտարումից	6	67
ՀՀՄՍ 1.98(դ)	Օգուտ (կորուստ) վաճառքի համար մատչելի ներդրումների օտարումից	-	-
ՖՀՄՍ 7.20(ա)	Կուտակային օգուտ (կորուստ)՝ վերադասակարգված սեփական կապիտալից՝ վաճառքի համար մատչելի ներդրումների օտարման ժամանակ	-	-
ՖՀՄՍ 7.20(ա)	Կուտակային կորուստ՝ վերադասակարգված սեփական կապիտալից՝ վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկման ժամանակ	-	-

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՀՀՄՍ 21.52(ա)	Չուտ արտարժույթի փոխարժեքային օգուտներ (կորուստներ) «Լուսին» ԲԸ-ի դեմ դատական հայցապահանջի ըստ էության լուծումից առաջացող օգուտ(ծանոթագրություն 44)	819	474
ՖՀՄՍ 7.20(ա)	Չուտ օգուտ (կորուստ)՝ որպես ԻԱՇՎԱԿՆ նախորդված ֆինանսական ակտիվների գծով	40	-
ՖՀՄՍ 7.20(ա)	Չուտ օգուտ (կորուստ)՝ որպես ԻԱՇՎԱԿՆ նախորդված ֆինանսական պարտավորությունների գծով (i)	(488)	-
ՖՀՄՍ 7.20(ա)	Չուտ օգուտ (կորուստ)՝ որպես առևտրական նպատակներով պահվող դասակարգված ֆինանսական ակտիվների գծով (ii)	202	99
ՖՀՄՍ 7.20(ա)	Չուտ օգուտ (կորուստ)՝ որպես առևտրական նպատակներով պահվող դասակարգված ֆինանսական պարտավորությունների գծով(iii)	(51)	-
ՀՀՄՍ 40.76(դ)	Օգուտ (կորուստ)՝ ներդրումային գույքի իրական արժեքում փոփոխություններից	30	297
ՖՀՄՍ 7.24(բ)	Հեջի անարդյունավետ մասը դրամական միջոցների հոսքերի հեջերի գծով	89	68
ՖՀՄՍ 7.24(գ)	Հեջի անարդյունավետ մասը զուտ ներդրումների հեջերի գծով	-	-
		<hr/>	<hr/>
		647	1,005

(i) Որպես ԻԱՇՎԱԿՆ նախորդված այս ֆինանսական պարտավորությունների գծով զուտ կորուստը ներառում է պարտավորությունների իրական արժեքի նվազումից առաջացած 125,000 ԴՄ օգուտ, որը հաշվանցվել է տարվա ընթացքում վճարված 613,000 ԴՄ շահաբաժիններով:

(ii) Գումարն իրենից ներկայացնում է առևտրական նպատակներով պահվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտը (տե՛ս ծանոթագրություն 22), որը բաղկացած է 202,000 ԴՄ իրական արժեքի աճից (2009թ.՝ 99,000 ԴՄ), ներառյալ տարվա ընթացքում ստացված 46,000 ԴՄ տոկոսը (2009թ.՝ 27,000 ԴՄ):

(iii) Գումարն իրենից ներկայացնում է տոկոսադրույքային սվոպից առաջացող զուտ կորուստ, որը տնտեսապես հեջավորում է մարելի կումուլյատիվ (կուտակային) արտոնյալ բաժնետոմսերի իրական արժեքը, որի համար, սակայն, հեջի հաշվապահական հաշվառումը չի կիրառվում (տե՛ս ծանոթագրություն 34):Տոկոսադրույքային սվոպի գծով զուտ կորուստը բաղկացած է սվոպի 51,000 ԴՄ իրական արժեքի աճից, ներառյալ տարվա ընթացքում վճարված 3,000 ԴՄ տոկոսը:

Այլ օգուտներ կամ կորուստներ չեն ճանաչվել փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով, բացի ծանոթագրություններ 7-ում և 9-ում բացահայտվածներից, և առևտրական դեբիտորական պարտքերի գծով ճանաչված (հակադարձված)արժեքը կումուլյացիոն կորուստներից (տե՛ս ծանոթագրություններ 13 և 25):

9. Ֆինանսական ծախսումներ

	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի	
	Հազ. դրամ	Հազ. դրամ	
Շարունակվող գործունեություն			
Բանկային օվերդրաֆտների և փոխառությունների (բացի կապակցված կողմերից ստացվածների) գծով տոկոս	3,056	3,531	
Կապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով տոկոս	1,018	2,521	
Ֆինանսական վարձակալության ներքո պարտավորությունների գծով տոկոս	75	54	
Փոխարկելի պարտատոմսերի գծով տոկոս	110	-	
Հարատև պարտատոմսերի գծով տոկոս	52	-	
Անտոկոս պետական փոխառությունների գծով տոկոս	188	-	
Այլ տոկոսային ծախս	25	-	
	<hr/>	<hr/>	
ՖՀՄՍ 7.20(բ)	Ընդամենը տոկոսային ծախս՝ որպես «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով» չափվող չդասակարգված ֆինանսական պարտավորությունների գծով	4,524	6,106

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՀՀՄՍ 23.26(ա)	Հանած՝ որակավորվող ակտիվների սկզբնական արժեքում ներառված գումարը	(11)	(27)
		4,513	6,079
ՖՀՄՍ 7.24(ա)	Կորուստ (օգուտ)՝ իրական արժեքի հեջերում որպես հեջավորման գործիքներ նախորոշված ածանցյալ գործիքների գծով	5	-
ՖՀՄՍ 7.24(ա)	(Օգուտ) կորուստ՝ նախորոշված իրական արժեքի հեջում հեջավորված հոդվածի գծով հեջավորված ռիսկին վերագրելի ճշգրտումից	(5)	-
		-	-
ՖՀՄՍ 7.23(դ)	Սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված իրական արժեքի փոփոխություններից օգուտներ՝ լողացող տոկոսադրույքով պարտքային գործիքի դրամական հոսքերի հեջում որպես հեջավորման գործիք նախորոշված տոկոսադրույքային սվոպի գծով	(123)	(86)
ՖՀՄՍ 5.17	Պահուստների գծով զեղչերի հետպտույտ	28	30
	Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի ծախսումների գծով զեղչի հետպտույտ	-	-
	Այլ ֆինանսական ծախսումներ	-	-
		4,418	6,023

ՀՀՄՍ 23.26(բ) Ընդհանուր նպատակներով փոխառնված միջոցների գծով միջին կշռված կապիտալացման դրույքը տարեկան 8.0% է (2009թ.՝ 7.8%):

Որպես «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով» դասակարգված ֆինանսական պարտավորություններին վերաբերող ֆինանսական ծախսումները ներառված են «այլ օգուտներ և կորուստներ»-ում՝ ծանոթագրություն 8-ում:

10. Շահութահարկեր՝ շարունակվող գործունեությանը վերաբերող

10.1 Շահութահարկ՝ ճանաչված շահույթում կամ վնասում

	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ
ՀՀՄՍ 12.79		
Ընթացիկ հարկ		
Ընթացիկ հարկի գծով ծախս՝ ընթացիկ տարվա համար	10,071	11,347
Ընթացիկ տարում ճանաչված ճշգրտումներ՝ նախորդ տարիների ընթացիկ հարկի գծով	-	-
Այլ [նկարագրել]	-	-
	10,071	11,347
Հետաձգված հարկ		
Հետաձգված հարկի գծով ծախս՝ ճանաչված ընթացիկ տարում	1,643	538
Սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված հետաձգված հարկ	(150)	(86)
Հետաձգված հարկի ճշգրտումներ՝ կապված հարկերի դրույքների և հարկային օրենքների փոփոխությունների հետ	-	-
Հետաձգված հարկային ակտիվների նվազեցում (նախորդ դուրսգրումների հակադարձումներ)		

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

		-	-
		1,493	452
Այլ [նկարագրել]		11,564	11,799
Ընդամենը շարունակվող գործունեությանը վերաբերող շահութահարկի գծով ծախս՝ ճանաչված ընթացիկ տարում		11,564	11,799
ՀՀՄՍ 12.81(զ)	Տարվա շահութահարկի գծով ծախսը կարող է համապատասխանեցվել հաշվապահական շահույթին հետևյալ կերպ.		
		31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
	Շահույթ մինչև հարկումը՝ շարունակվող գործունեությունից	30,303	32,131
	Շահութահարկի գծով ծախս՝ հաշվարկված 30%-ով (2009թ. 30%)	9,091	9,639
	Հարկումից ազատված եկամտի ազդեցությունը	(30)	-
	Հարկվող շահույթը որոշելիս չնվազեցվող ծախսերի ազդեցությունը	2,562	2,221
	Այլ հարկային արտոնությունների (հետազոտություններ, մշակումներ և այլն) ազդեցությունը	(75)	(66)
	Գուղվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստ (չնվազեցվող)	5	-
	Այն չօգտագործված հարկային վնասների և հարկային զեղչերի ազդեցությունը, որոնց գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել	-	-
	Նախկինում չճանաչված և չօգտագործված հարկային վնասների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների ազդեցություն, որոնց գծով այժմ ճանաչվել են հետաձգված հարկային ակտիվներ	-	-
	Այլ իրավակարգերում գործող դրաստր կազմակերպությունների տարբեր հարկային դրույքների ազդեցությունը	11	5
ՀՀՄՍ 12.81(դ)	Շահութահարկի դրույքի՝ xx%-ից xx% փոփոխվելու (ուժի մեջ [զրել ամսաթիվը]-ից) ազդեցությունը հետաձգված հարկերի մնացորդների վրա	-	-
	Այլ [նկարագրել]	-	-
		11,564	11,799
	Ընթացիկ տարում ճանաչված ճշգրտումներ՝ նախորդ տարիների ընթացիկ հարկի գծով	-	-
	Շահութահարկի գծով ծախս՝ ճանաչված շահույթում կամ վնասում (շարունակվող գործունեությանը վերաբերող)	11,564	11,799
ՀՀՄՍ 12.81(զ)	2010 և 2009թթ. համար վերոնշյալ համապատասխանեցումներում կիրառված հարկային դրույքը [Հայաստանում] գործող իրավաբանական անձանց կողմից հարկային օրենսդրությանը համապատասխան հարկվող շահույթից վճարվելիք շահութահարկի դրույքաչափն է [30%]:		
ՀՀՄՍ 12.81(ա)	10.2 Շահութահարկ՝ ուղղակիորեն ճանաչված սեփական կապիտալում		
		31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
	Ընթացիկ հարկ		
	Բաժնետոմսի թողարկման հետ կապված ծախսումներ	(1)	-
	Բաժնետոմսի հետգնման հետ կապված ծախսումներ	(8)	-

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Այլ [նկարագրել]	-	-
	(9)	-
Հերածգված հարկ		
Սեփականատերերի հետ կապված գործարքներից առաջացած՝		
Փոխարկելի պարտատոմսերի սեփական կապիտալի բաղադրիչի սկզբնական ճանաչումը	242	-
Բաժնետոմսի թողարկման և հետզնման հետ կապված ծախսումներ, որոնք ենթակա են նվազեցման 5 տարվա ընթացքում	(75)	-
Հավելյալ հարկային նվազեցումներ՝ կապված բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների հետ	-	-
Այլ [նկարագրել]	-	-
	167	-
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված ընդամենը շահութահարկ	158	-

ՀՀՄՍ 12.81(աբ)

10.3 Շահութահարկ՝ ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
Ընթացիկ հարկ [նկարագրել]	-	-
Հերածգված հարկ		
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված եկամուտների և ծախսերի գծով առաջացած՝		
Արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկում	22	36
Հեջավորման գործիքների իրական արժեքի վերաչափում (արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջում)	(4)	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի վերաչափում	28	24
Հեջավորման գործիքների իրական արժեքի վերաչափում (դրամական միջոցների հոսքերի հեջում)	131	95
Գույքի վերագնահատումներ	-	493
Այլ [նկարագրել]	-	-
	177	648
Սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված եկամուտների և ծախսերի գծով առաջացած՝		
Դրամական միջոցների հոսքերի հեջերին վերաբերող	(37)	(26)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներին վերաբերող	-	-
Արտերկրյա ստորաբաժանման օտարման պահին	(36)	-
	(73)	(26)
Հեջավորված հոդվածների սկզբնական հաշվեկշռային արժեքներին փոխանցված՝ դրամական միջոցների հոսքերի հեջերում հեջավորման գործիքների օգուտների (կորուստների) գծով առաջացած	(77)	(60)

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ընդամենը շահութահարկ

27

562

10.4 Ընթացիկ հարկային ակտիվներ և պարտավորություններ

	31/12/10	31/12/09	01/01/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Ընթացիկ հարկային ակտիվներ			
Նախորդ ժամանակաշրջաններում վճարված հարկերի փոխհատուցման նպատակով անցյալ ժամանակաշրջաններ փոխանցվող հարկային վնասներից օգուտներ	-	-	-
Դեբիտորական պարտք վերադարձման ենթակա շահութահարկերի գծով	125	60	81
Այլ [նկարագրել]	-	-	-
	125	60	81
Ընթացիկ հարկային պարտավորություններ			
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտք	5,270	5,868	4,910
Այլ [նկարագրել]	-	-	-
	5,270	5,868	4,910

10.5 Հետաձգված հարկերի մնացորդներ

Ստորև բերված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված հետաձգված հարկային ակտիվների (պարտավորությունների) վերլուծությունը.

	31/12/10	31/12/09	01/01/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Հետաձգված հարկային ակտիվներ	2,083	1,964	1,843
Հետաձգված հարկային պարտավորություններ	(6,729)	(5,657)	(4,436)
	(4,646)	(3,693)	(2,593)

ՀՀՄՍ 12.81(ա),(ե)

2010	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում կամ վնասում	Ճանաչված ֆինանսական արդյունքում	Ճանաչված սեփական կապիտալում	Սեփական կապիտալից շահույթի կամ վնասի վերադասակարգված	Ձեռք դրբերումներ տարումներ	Այլ [նկարագրել]	Վերջնական մնացորդ
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ

Հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ), որոնք վերաբերում են՝

Դրամական միջոցների հոսքերի հեջերին	(119)	-	(131)	-	11	-	-	(136)
Ջուտ ներդրումների հեջերին	-	-	4	-	-	-	-	4
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներին	(1,268)	(356)	-	-	-	-	-	(1,624)
Հիմնական միջոցներին	(3,165)	(1,517)	-	-	-	458	430	(3,794)

ՖՀՄՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Ներդրումային գույքին	(90)	(9)	-	-	-	-	(99)	
Ֆինանսական վարձակալությանը	(22)	18	-	-	-	-	(4)	
Ոչ նյութական ակտիվներին	(572)	196	-	-	-	-	(376)	
ԻԱՇՎԱԿ								
Ֆինանսական ակտիվներին	-	-	-	-	-	-	-	
ՎՀՄ ֆինանսական ակտիվներին	(226)	-	(28)	-	-	-	(254)	
Հետաձգված հատույթին	34	12	-	-	-	-	46	
Փոխարկելի պարտատոմսերին	-	9	-	(242)	-	-	(233)	
Արտերկրյա ստորաբաժանումների գծով փոխարժեքային տարբերություններին	(14)	-	(22)	-	3	-	-	
Պահուստներին	1,672	42	-	-	-	-	1,714	
Կասկածելի դեբիտորական պարտքերին	251	(8)	-	-	-	(4)	239	
Այլ ֆինանսական պարտավորություններին	5	2	-	-	-	-	7	
Բաժնետոմի թողարկման և հետգնման հետևանքով ձևավորված ծախսումներ	-	-	-	75	-	-	75	
Այլ [նկարագրել]	(181)	(32)	-	-	-	-	(213)	
	<u>(3,695)</u>	<u>(1,643)</u>	<u>(177)</u>	<u>(167)</u>	<u>15</u>	<u>454</u>	<u>430</u>	<u>(4,648)</u>
Հարկային վնասներին	-	-	-	-	-	-	-	
Այլ	<u>2</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>2</u>
	<u>2</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>2</u>
	<u>(3,693)</u>	<u>(1,643)</u>	<u>(177)</u>	<u>(167)</u>	<u>15</u>	<u>454</u>	<u>430</u>	<u>(4,646)</u>

ՀՀՄՄ 12.81(ա),(է)

2009

Հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ), որոնք վերաբերում են¹

Դրամական միջոցների հոսքերի հեջերին	(110)	-	(95)	-	8	-	-	(119)
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներին	(791)	(477)	-	-	-	-	-	(1,268)
Հիմնական միջոցներին	(2,560)	(112)	(493)	-	-	-	-	(3,165)
Ներդրումային գույքին	-	(90)	-	-	-	-	-	(90)
Ֆինանսական վարձակալությանը	(29)	7	-	-	-	-	-	(22)
Ոչ նյութական ակտիվներ	(669)	97	-	-	-	-	-	(572)
ԻԱՇՎԱԿ								
Ֆինանսական ակտիվներին	-	-	-	-	-	-	-	-
ՎՀՄ ֆինանսական ակտիվներին	(202)	-	(24)	-	-	-	-	(226)
Հետաձգված հատույթին	20	14	-	-	-	-	-	34

ՖՆԿՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Արտերկրյա ստորաբաժանումների գծով փոխարժեքային տարբերություններին	22	-	(36)	-	-	-	(14)
Պահուստներին	1,692	(20)	-	-	-	-	1,672
Կասկածելի դեբիտորական պարտքերին	122	129	-	-	-	-	251
Այլ ֆինանսական պարտավորություններին	9	(4)	-	-	-	-	5
Այլ [նկարագրել]	(97)	(84)	-	-	-	-	(181)
	<u>(2,593)</u>	<u>(540)</u>	<u>(648)</u>	<u>-</u>	<u>Զ</u>	<u>-</u>	<u>(3,695)</u>
Հարկային վնասներին	-	-	-	-	-	-	-
Այլ	-	2	-	-	-	-	2
	<u>-</u>	<u>2</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>2</u>
	<u>(2,593)</u>	<u>(538)</u>	<u>(648)</u>	<u>-</u>	<u>Զ</u>	<u>-</u>	<u>(3,693)</u>

10.6 Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր

	<u>31/12/10</u>	<u>31/12/09</u>
	Հազ. դրամ	Հազ. դրամ
Նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը, որոնց գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել, վերագրելի են ստորև բերվածին՝		
- հարկային վնասներ (ընթացիկ բնույթի)	-	-
- հարկային վնասներ (կապիտալ բնույթի)	-	-
- չօգտագործված հարկային արտոնություններ (ժամկետը լրանում է [ամսաթիվ])	11	11
- նվազեցվող ժամանակավոր տարբերություններ [նկարագրել]	-	-
	<u>11</u>	<u>11</u>

Չճանաչված հարկային արտոնությունների ժամկետը լրանում է 2012թ.:

10.7 Չճանաչված հարկվող ժամանակավոր տարբերություններ, որոնք վերաբերում են կապակցված կազմակերպություններում ներդրումներին

	<u>31/12/10</u>	<u>31/12/09</u>
	Հազ. դրամ	Հազ. դրամ
Պուստր, ասոցիացված և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ու մասնաճյուղերում ներդրումներին (մասնակցություններին, բաժնեմասերին) վերաբերող հարկվող ժամանակավոր տարբերությունները, որոնց գծով հետաձգված հարկային պարտավորություններ չեն ճանաչվել, վերագրելի են ստորև բերվածին՝		
- տեղական դուստր կազմակերպություններ	120	125
- արտերկրյա դուստր կազմակերպություններ	-	-
- ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող կազմակերպություններ	-	-
- այլ [նկարագրել]	-	-
	<u>120</u>	<u>125</u>

11. Ընդհատված գործունեություններ

11.1 Խաղալիքների արտադրության գործունեության օտարումը

ՖՀՄՍ 5.30
ՖՀՄՍ 5.41

2010թ. սեպտեմբերի 28-ին Ընկերությունը կնքեց վաճառքի պայմանագիր՝ օտարելու «Մանկիկ» ՍՊԸ-ն, որն իրականացնում էր Ընկերության խաղալիքների արտադրման ամբողջ գործունեությունը: Վաճառքից մուտքերը զգալիորեն գերազանցել են համապատասխան զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը, և հետևաբար, այդ գործունեությունը որպես վաճառքի համար պահվող վերադասակարգելիս արժեզրկումից կորուստներ չեն ճանաչվել գծով: Խաղալիքների արտադրության գործունեության օտարումը համապահունչ է Ընկերության երկարաժամկետ քաղաքականության հետ՝ իր գործունեությունը սևեռելու էլեկտրոնային սարքավորումների և այլ ժամանցի կազմակերպման ապրանքների շուկաների վրա: Օտարումն ավարտվել է 2010թ. նոյեմբերի 30-ին, երբ խաղալիքների արտադրության գործունեության հսկողությունն անցել է ձեռքբերողին: Օտարված ակտիվների և պարտավորությունների մանրամասները, ինչպես նաև օտարումից շահույթի կամ վնասի հաշվարկումը բացահայտված են ծանոթագրություն 45-ում:

11.2 Հեծանիվների արտադրության գործունեության օտարման ծրագիր

ՖՀՄՍ 5.30
ՖՀՄՍ 5.41

2010թ. նոյեմբերի 30-ին տնօրենների խորհուրդը ազդարարեց Ընկերության հեծանիվների արտադրության գործունեությունը օտարելու ծրագրի մասին: Օտարումը համահունչ է Ընկերության երկարաժամկետ քաղաքականության հետ՝ իր գործունեությունը սևեռելու էլեկտրոնային սարքավորումների և այլ ժամանցի կազմակերպման ապրանքների շուկաների վրա: Ընկերությունն ակտիվորեն գնորդ է փնտրում իր հեծանիվների արտադրության գործունեության համար և ակնկալում է ավարտել վաճառքը մինչև 2011թ. հուլիսի 31-ը: Ընկերությունը չի ճանաչել արժեզրկումից կորուստներ հեծանիվների գործունեության գծով՝ ո՛չ գործունեությունը որպես վաճառքի համար պահվող վերադասակարգվելու պահին, ո՛չ էլ հաշվետու ժամանակաշրջանի վերջին:

11.3 Ընդհատված գործունեություններից տարվա շահույթի վերլուծություն

[Համապարփակ ֆինանսական արդյունքների/ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում] ներառված ընդհատված գործունեությունների (այսինքն՝ խաղալիքների և հեծանիվների գործունեությունների) միավորված արդյունքները ներկայացված են ստորև: Համեմատական ընդհատված գործունեություններից շահույթի և դրամական հոսքերի ցուցանիշները վերաներկայացվել են ներառելու ընթացիկ տարում որպես ընդհատված դասակարգված այդ գործունեությունները:

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
ՖՀՄՍ 5.33(բ) Ընդհատված գործունեությունից տարվա շահույթ		
Հասույթ	64,405	77,843
Վյլ օգուտներ	30	49
	<u>64,435</u>	<u>77,892</u>
Փախսեր	(54,905)	(64,899)
Շահույթ մինչև հարկումը	9,530	12,993
ՀՀՄՍ 12.81(ը) Համապատասխան շահութահարկի գծով ծախս	(2,524)	(2,998)
	<u>7,006</u>	<u>9,995</u>
«Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ	-	-
Օգուտ (կորուստ) գործունեության օտարումից, ներառյալ արտարժույթի վերահաշվարկման պահուստից շահույթին կամ վնասին վերադասակարգված 120,000 ԴՄ կուտակային փոխաժեքային օգուտը (տես ծանոթագրություն 45)	1,940	-
ՀՀՄՍ 12.81(ը) Համապատասխան շահութահարկի գծով ծախս	(636)	-
	<u>1,304</u>	<u>-</u>
ՖՀՄՍ 5.33(դ) Ընդհատված գործունեությունից տարվա շահույթ (Ընկերության սեփականատերերին վերագրելի)	<u>8,310</u>	<u>9,995</u>

ՖՀՄՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

	31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
	Հազ. դրամ	Հազ. դրամ
ՖՀՄՄ 5.33(զ) <i>Դրամական հոսքեր ընդհանուր գործունեությունից</i>		
Գործառնական գործունեությունից զուտ դրամական ներհոսքեր	6,381	7,078
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական ներհոսքեր	2,767	-
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական արտահոսքեր	(5,000)	-
Զուտ դրամական հոսքեր	4,148	7,078

Հեծանիվների արտադրության գործունեությունը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգվել է հաշվառվել է որպես վաճառքի համար պահվող օտարման խումբ (տե՛ս ծանոթագրություն 12):

12. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ

	31/12/10	31/12/09	01/01/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Վաճառքի համար պահվող սեփական հողամասեր (i)	1,260	-	-
Հեծանիվների արտադրության գործունեությանը վերաբերող ակտիվներ (ii)	21,076	-	-
	22,336	-	-
Վաճառքի համար պահվող ակտիվների հետկապված պարտավորություններ (ii)	3,684	-	-

ՖՀՄՄ 5.41 (i) Ընկերությունը հաջորդ 12 ամսում մտադիր է օտարել իր կողմից այլևս չօգտագործվող սեփական հողամասերից մեկը: Հողամասում տեղակայված գույքը նախկինում օգտագործվել է Ընկերության խաղալիքների գործունեությունում և լրիվությամբ մաշեցվել (ամորտիզացվել) է: Գնորդի գտնելու համար կատարվող որոնումներն ընթացքի մեջ են: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողամասը որպես վաճառքի համար պահվող վերադասակարգելիս արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

ՖՀՄՄ 5.41 (ii) Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 11-ում, Ընկերությունը ձգտում է օտարել իր **ՖՀՄՄ 5.38** հեծանիվների արտադրության գործունեությունը և ակնկալում է, որ օտարումը կավարտվի մինչև 2011թ. հուլիսի 31-ը: Հաշվետու ժամանակաշրջանի վերջին հեծանիվների արտադրության գործունեության ակտիվների և պարտավորությունների հիմնական դասերն են՝

	31/12/10
	Հազ. դրամ
Փողվիլ	1,147
Հիմնական միջոցներ	16,944
Պաշարներ	2,090
Վնասարկական դեբիտորական պարտքեր	720
Դրամական միջոցների մնացորդներ	175
Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հեծանիվների արտադրության գործունեության ակտիվներ	21,076
Վնասարկական կրեդիտորական պարտքեր	(3,254)
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	(430)

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հեծանիվների արտադրության գործունեության ակտիվների հետ կապված պարտավորություններ (3,684)

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հեծանիվների արտադրության գործունեության զուտ ակտիվները 17,392

13. Շարունակակվող գործունեությունից տարվա շահույթ

ՖՀՄՍ 5.33(դ)	Շարունակվող գործունեությունից տարվա շահույթը վերագրելի է՝	31/12/10թ. ավարտված տարի <hr/> Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի <hr/> Հազ. դրամ
	Փնկերության սեփականատերերին	14,739	17,569
	Չվերահսկվող բաժնեմասերին	4,000	2,763
		<hr/> 18,739	<hr/> 20,332

Շարունակվող գործունեությունից տարվա շահույթը որոշվել է ստորև թվարկված դեբետագրումները (կրեդիտագրումները) կատարելուց հետո:

ՖՀՄՍ 7.20(ե)	13.1 Արժեզրկումից կորուստներ ֆինանսական ակտիվների գծով	31/12/10թ. ավարտված տարի <hr/> Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի <hr/> Հազ. դրամ
	Արժեզրկումից կորուստ առևտրական դեբիտորական պարտքերի գծով (ծանոթագրություն 25)	63	430
	Արժեզրկումից կորուստ վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումների գծով	-	-
	Արժեզրկումից կորուստ վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումների գծով	-	-
	Արժեզրկումից կորուստ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների գծով	-	-
	Արժեզրկումից կորուստ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների գծով	-	-
		<hr/> 63	<hr/> 430
	Առևտրական դեբիտորական պարտքերի գծով ճանաչված արժեզրկումից կորուստների հակադարձում	<hr/> (103)	<hr/> -

13.2 Մաշվածության և ամորտիզացիայի ծախս

ՀՀՄՍ 38.118(դ)	Հիմնական միջոցների ամորտիզացիա իջ նյութական ակտիվների ամորտիզացիա (ներառված է [վաճառքի ինքնարժեքում /մաշվածության և ամորտիզացիայի ծախսերում /վարչական ծախսերում /այլ ծախսերում])	9,601	12,322
		<hr/> 1,592	<hr/> 1,556
ՀՀՄՍ 1.104	Ընդամենը մաշվածության և ամորտիզացիայի ծախս	<hr/> 11,193	<hr/> 13,878

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՀՀՄՍ 40.75(զ)	13.3 Ներդրումային գույքի գծով կադարված ուղղակի գործառնական ծախսեր		
	Ուղղակի գործառնական ծախսեր տարվա ընթացքում վարձակալական եկամուտ առաջացրած ներդրումային գույքի գծով	1	2
	Ուղղակի գործառնական ծախսեր տարվա ընթացքում վարձակալական եկամուտ չառաջացրած ներդրումային գույքի գծով	-	-
		<u>1</u>	<u>2</u>
ՀՀՄՍ 38.126	13.4 Կադարման պահին ծախս ճանաչված հեքազորման և մշակման ծախսումներ	<u>502</u>	<u>440</u>
		31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
		Հազ. դրամ	Հազ. դրամ
	13.5 Աշխատակիցների հատուցումների գծով ծախս		
ՀՀՄՍ 19.46 ՀՀՄՍ 19.120Ա(է)	Հետաշխատանքային հատուցումներ (տե՛ս ծանոթություն 39)		
	Սահմանված մասհանումների պլաններ	160	148
	Սահմանված հատուցումների պլաններ	<u>586</u>	<u>556</u>
		<u>746</u>	<u>704</u>
ՖՀՄՍ 2.50	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (տես ծանոթագրություն 42.1)		
ՖՀՄՍ 2.51(ա)	Բաժնային գործիքներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	206	338
ՖՀՄՍ 2.51(ա)	Դրամական միջոցներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	-	-
		<u>206</u>	<u>338</u>
ՀՀՄՍ 19.142	Ազատման նպաստներ Աշխատակիցների այլ հատուցումներ	-	-
		8,851	<u>10,613</u>
ՀՀՄՍ 1.104	Ընդամենը աշխատակիցների հատուցումների գծով ծախս	<u>9,803</u>	<u>11,655</u>
	13.6 Թերությունների վերացման բացառիկ (ոչ սովորական) ծախսումներ		
ՀՀՄՍ 1.97	Տարվա ընթացքում Ընկերության խոշոր հաճախորդներից մեկին մատակարարված ապրանքների գծով իրականացվելիք թերությունների վերացման աշխատանքների գծով ճանաչվել են 4.17 մլն ԴՄ ծախսումներ, որոնք ներառվել են [վաճառքի ինքնարժեքի/պաշարների ինքնարժեքի և աշխատակիցների հատուցումների գծով ծախսերի] մեջ (2009թ.՝ զրո): Ճանաչված գումարն իրենից ներկայացնում է համաձայնեցված գրաֆիկով նախատեսված մինչև 2012թ. կատարվելիք աշխատանքների գնահատված ինքնարժեքը: Ընթացիկ տարում պահուստից օգտագործվել է 1,112 հազ. ԴՄ, իսկ պահուստի տարեվերջյան մնացորդը 3,058 հազ. ԴՄ է՝ 2011 և 2012թթ. նախատեսված ծախսումների համար (տե՛ս ծանոթագրություն 35):		
	14. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ		
		31/12/10թ. ավարտված տարի	31/12/09թ. ավարտված տարի
		Դրամ	Դրամ

ՖՀՄՍ-ների համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ՝

ՀՀՄՍ 33.68	Շարունակվող գործունեությունից	84.5	87.3
	Ուղիատված գործունեությունից	47.7	49.7
	Ուղամենը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	132.2	137.0

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրացված շահույթ՝

ՀՀՄՍ 33.68	Շարունակվող գործունեությունից	74.0	83.2
	Ուղիատված գործունեությունից	41.5	47.3
	Ուղամենը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրացված շահույթ	115.5	130.5

ՀՀՄՍ 33.70(ա) 14.1 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկման համար օգտագործված շահույթն ու սովորական բաժնետոմսերի միջին կշռված թիվը բերված են ստորև.

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
Ոնկերության սեփականատերերին վերագրելի տարվա շահույթ Այլ [նկարագրել]	23,049 -	27,564 -
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկելիս օգտագործված շահույթ	23,049	27,564
Ուղիատված գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկելիս օգտագործված ընդհատված գործունեությունից տարվա շահույթ Այլ [նկարագրել]	(8,310) -	(9,995) -
Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկելիս օգտագործված շահույթ	14,739	17,569

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. հատ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. հատ
ՀՀՄՍ 33.70(բ) Սովորական բաժնետոմսերի միջին կշռված թիվը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի համար	17,432	20,130

14.2 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրացված շահույթ

	31/12/10թ. ավարտված տարի Հազ. դրամ	31/12/09թ. ավարտված տարի Հազ. դրամ
ՀՀՄՍ 33.70(ա) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրացված շահույթը հաշվարկելիս օգտագործված շահույթը հետևյալն է.		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկելիս օգտագործված շահույթ	23,049	27,564
Փոխարկելի պարտատոմսերի գծով տոկոս (30%-ով հարկումից հետո)	77	-

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը		
ՖՀՄՍ 7.10(բ)	Հաշվեկշռային արժեքի և սահմանված մարման ամսաթվի դրությամբ պայմանագրի համաձայն վճարման ենթակա գումարի միջև տարբերություն		
	- կուտակային արտոնյալ բաժնետոմսեր՝ իրական արժեքով (ծանոթագրություն 34)	14,875	-
	- մարման ամսաթվին վճարվելիք գումար	15,000	-
		(125)	-

ՖՀՄՍ 7.11 (i) Պարտքային ռիսկի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես կուտակային արտոնյալ բաժնետոմսերի իրական արժեքի ընդհանուր փոփոխության (125,000 ԴՄ) և կուտակային մարելի արտոնյալ բաժնետոմսերի իրական արժեքի միայն շուկայական ռիսկի գործոնների փոփոխությամբ պայմանավորված փոփոխության (105,000 ԴՄ) միջև տարբերություն: Շուկայական ռիսկի գործոնների պատճառով առաջացած իրական արժեքի փոփոխությունը հաշվարկվել է՝ օգտագործելով ելակետային տոկոսադրույքային եկամտաբերության կորերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ պարտքային ռիսկի տարբերությունը (միջակայքը) պահելով անփոփոխ: Կուտակային մարելի արտոնյալ բաժնետոմսերի իրական արժեքը գնահատվել է՝ զեղչելով ապագա դրամական միջոցները՝ օգտագործելով գնանշված ելակետային տոկոսադրույքային եկամտաբերության կորերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և ձեռքբերելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող փոխառությունների համար փոխատուների առաջարկած գնանշումները՝ գնահատելու պարտքային ռիսկի տարբերությունը (միջակայքը):

ՖՀՄՍ 7.31 40.3 Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները

Ընկերության կորպորատիվ ֆինանսների ստորաբաժանումը տրամադրում է բիզնես ծառայություններ, համակարգում է մուտքը դեպի ներքին և միջազգային ֆինանսական շուկաներ,

մոնիթորինգի է ենթարկում և կառավարում է Ընկերության գործունեության հետ կապված ֆինանսական ռիսկերը՝ ռիսկերի վերաբերյալ ներքին հաշվետվությունների միջոցով, որոնցում վերլուծվում են ենթարկվածությունները՝ ըստ ռիսկերի աստիճանների և մասշտաբների: Այս ռիսկերը ներառում են շուկայական ռիսկը (ներառյալ արժույթային ռիսկը, տոկոսադրույքային ռիսկը և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ձգտում է այս ռիսկերի ազդեցությունը հասցնել նվազագույնի՝ օգտագործելով ածանցյալ ֆինանսական գործիքներ՝ հեջավորելու ռիսկին ենթարկվածությունները: Ֆինանսական ածանցյալ գործիքների օգտագործումը կարգավորվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից հաստատված քաղաքականությամբ, որով սահմանվում են գրավոր սկզբունքներ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, պարտքային ռիսկի, ֆինանսական ածանցյալ գործիքների և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների օգտագործման, ինչպես նաև ժամանակավորապես ազատ իրացվելի միջոցների ներդրման վերաբերյալ: Քաղաքականությանը և ենթարկվածության սահմաններին համապատասխանությունը վերանայվում է ներքին աուդիտորների կողմից շարունակական հիմունքով: Ընկերությունը չի կնքում կամ չի վաճառում ֆինանսական գործիքներ, ներառյալ ածանցյալ ֆինանսական գործիքները սպեկուլատիվ (առևտրական) նպատակներով:

Կորպորատիվ ֆինանսների ստորաբաժանումը եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացնում Ընկերության ռիսկերի կառավարման կոմիտեին (անկախ մարմին, որը մոնիթորինգի է ենթարկում ռիսկերն ու ռիսկերին ենթարկվածությունները չեզոքացնելու համար օգտագործվող քաղաքականությունները):

40.4 Շուկայական ռիսկ

ՖՀՄՍ 7.33

Ընկերությունն իր գործունեությամբ ենթարկված է հիմնականում արտարժույթի փոխանակման փոխարժեքների (տե՛ս ստորև 40.6) և տոկոսադրույքների (տե՛ս ստորև 40.7) փոփոխությունների ֆինանսական ռիսկերին: Արտարժույթային և տոկոսադրույքային ռիսկերին իր ենթարկվածությունը կառավարելու համար Ընկերությունը կնքում է բազմազան ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ.

- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր՝ հեջավորելու արտարժույթային ռիսկը, որն առաջանում է էլեկտրոնային սարքավորման արտահանումից Բ և Գ երկրներ,
- տոկոսադրույքային սվոպեր՝ տոկոսադրույքների աճի ռիսկը չեզոքացնելու համար, և
- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր՝ հեջավորելու արտարժույթային ռիսկը, որն առաջանում է «Սիփան» ԲԸ արտերկրյա ստորաբաժանումում Ընկերության ներդրման վերահաշվարկից, որի ֆունկցիոնալ արժույթը Բ արժույթն է:

Շուկայական ռիսկին ենթարկվածությունները չափվում են՝ օգտագործելով ռիսկին ենթակա արժեք, որը լրացվում է զգայունության վերլուծությամբ:

ՖՀՄՍ 7.33(գ)

Շուկայական ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը, ինչպես նաև այդ ռիսկերի կառավարման և չափման մեթոդները փոփոխությունների չեն ենթարկվել:

ՖՀՄՍ 7.41

40.5 Ռիսկին ենթակա արժեքի (VaR) վերլուծությունը

Ռիսկին ենթակա արժեքի (VaR) ցուցանիշն իրենից ներկայացնում է մինչև հարկումը շահույթի հնարավոր կորստի գնահատականը տրված ժամանակաշրջանի ընթացքում որոշակի վստահության մակարդակով: Ռիսկին ենթակա արժեքի (VaR) մեթոդաբանությունը վիճակագրորեն սահմանված, հավանականության վրա հիմնված մոտեցում է, որը հաշվի է առնում շուկայի փոփոխականությունը, ինչպես նաև ռիսկի դիվերսիֆիկացումը՝ ճանաչելով արտադրանքների և շուկաների միջև կոռելյացիաները և փոխադարձ փոխարինելիությունը: Ռիսկերը կարող են չափվել հետևողականորեն բոլոր շուկաների և արտադրանքների համար, և ռիսկերի ցուցանիշները կարող են համախմբվել՝ ստանալու համար ռիսկի մեկ ցուցանիշ: Մեկօրյա 99% ռիսկին ենթակա արժեքի (VaR) թիվը, որն օգտագործվում է Ընկերության կողմից, արտացոլում է 99% հավանականությունը, որ օրական կորուստը չի գերազանցի ներկայացված ռիսկին ենթակա արժեքը (VaR):

Ռիսկին ենթակա արժեքի (VaR) մեթոդաբանությունները, որոնք օգտագործվում են ռիսկերի օրական չափերը հաշվարկելու համար, ներառում են անցյալ (վիճակագրական) և վարիացիայի-կովարիացիայի մոտեցումներ: Ի լրումն այս երկու մեթոդաբանությունների՝ Monte Carlo-ի սիմուլյացիայի մեթոդներ են կիրառվում տարբեր պորտֆելներում ամսական հիմունքով՝ որոշելու պոտենցիալ ապագա ենթարկվածությունը:

ՖՆՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Ռիսկին ենթակա արժեքի (VaR) վերաբերյալ անցյալ (վիճակագրական) (մեկօրյա, 99%) տվյալներ՝ ըստ ռիսկի տեսակի՝	Միջին		Նվազագույն		Առավելագույն		Տարվա ավարտը	
	2010	2009	2010	2009	2010	2009	31/12/10	31/12/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Արտարժույթ	980	1,340	546	943	1,200	1,600	980	1,350
Տոկոսադրույք	115	60	85	45	150	95	105	55
Դիվերսիֆիկացում	(45)	(40)	-	-	-	-	(55)	(50)
Ընդամենը VaR ներթարկվածություն	1,050	1,360					1,030	1,355

Այն դեպքում, երբ VaR-ը հաշվի է առնում Ընկերության արժույթային և տոկոսադրույքային ռիսկին օրական ենթարկվածությունը, զգայունության վերլուծությունը գնահատում է տարվա ընթացքում տոկոսադրույքի կամ արտարժույթի փոխարժեքում ողջամտորեն հնարավոր փոփոխության ազդեցությունը: Ի լրումն ռիսկին ենթակա արժեքի (VaR) ավելի երկար ժամանակաշրջանի համար զգայունության վերլուծություն է կատարվում, ինչն օգնում է Ընկերությանը՝ գնահատելու իր շուկայական ռիսկին ենթարկվածությունները: Արտարժույթային ռիսկի զգայունության վերլուծության մանրամասները բերված են աստորև՝ 40.6-ում, իսկ տոկոսադրույքային ռիսկի զգայունության վերլուծության մանրամասները՝ 40.7-ում:

40.6 Արտարժույթային ռիսկի կառավարումը

ՖՆՄՍ 7.33, 34

Ընկերությունը իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժույթային ռիսկին ենթարկվածությունները կառավարվում են հաստատված քաղաքականության շրջանակում՝ օգտագործելով արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր:

Ընկերության արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

	Պարտավորություններ		Ակտիվներ	
	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Բ երկրի արժույթ	6,297	7,469	1,574	1,671
Գ երկրի արժույթ	186	135	-	-
Այլ	-	-	-	-

40.6.1 Արտարժույթի զգայունության վերլուծություն

Ընկերությունը հիմնականում ենթարկված է Բ երկրի և Գ երկրի արժույթներով պայմանավորված ռիսկերին:

ՖՆՄՍ 7. 34(ա), 40(բ)

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Ընկերության զգայունության վերլուծություն՝ արտարժույթի փոխարժեքի 10% աճի և նվազման համար: 10%-ը զգայունության այն չափն է, որն օգտագործվում է ղեկավարությանը ներկայացվող արտարժույթային ռիսկի վերաբերյալներքին (կառավարչական) հաշվետվությունում, և որը ներկայացնում է արտարժույթի փոխարժեքում ողջամտորեն հնարավոր փոփոխության վերաբերյալ ընկերության ղեկավարության գնահատականը: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն չմարված արտարժույթով արտահայտված դրամային հոդվածներ և ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրանց վերահաշվարկումը ճշգրտում է արտարժույթի փոխարժեքի 10% փոփոխությամբ: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին փոխառություններ, ինչպես նաև Ընկերության ներսում արտերկրյա ստորաբաժանումներին փոխառություններ, երբ փոխառությունն արտահայտված է փոխատուի կամ փոխառուի ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով: Ստորև բերված աղյուսակում դրական թիվը ցույց է տալիս շահույթի կամ սեփական կապիտալի ավելացում, երբ

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ԱՄ-ը համապատասխան արտարժույթների նկատմամբ ուժեղանում է (ամրապնդվում է) 10%-ով: Իսկ ԱՄ-ի թուլացումը (արժեզրկումը) համապատասխան արտարժույթների նկատմամբ 10%-ով կհանգեցնի շահույթում կամ սեփական կապիտալում համադրելի, բայց բացասական նշանով փոփոխության:

	<u>Բ արժույթի ազդեցությունը</u>			<u>Գ արժույթի ազդեցությունը</u>			
	<u>2010</u>	<u>2009</u>		<u>2010</u>	<u>2009</u>		
	Հազ. դրամ	Հազ. դրամ		Հազ. դրամ	Հազ. դրամ		
ՖՀՄՍ 7.40(ա)	Շահույթ կամ վնաս	472	579	(i)	19	14	(iii)
ՖՀՄՍ 7.40(ա)	Սեփական կապիտալ	96	122	(ii)	17	19	(iv)

- (i) Սա հիմնականում վերագրելի է Բ արժույթով արտահայտված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջին ենթարկվածությանը:
- (ii) Սա կատարվել է դրամական միջոցների հոսքերի հեջերում և զուտ ներդրումների հեջերում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունների արդյունքում:
- (iii) Սա հիմնականում վերագրելի է Գ արժույթով արտահայտված կրեդիտորական պարտքերի հաշվետու ժամանակաշրջանի վերջին ենթարկվածությանը:
- (iv) Սա հիմնականում կատարվել է դրամական միջոցների հոսքերի հեջերում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունների արդյունքում:

ՖՀՄՍ 7.33(գ) Ընկերության զգայունությունը արտարժույթի նկատմամբ ընթացիկ տարում նվազել է, ինչը հիմնականում արդյունք է Բ արժույթով արտահայտված ներդրումների օտարման, Բ արժույթով արտահայտված վաճառքի նվազման և ֆինանսական տարվա վերջին եռամսյակում կատարված գնումների, որը հանգեցրել է Բ արժույթով արտահայտված առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոքր գումարների:

ՖՀՄՍ 7.42 Ղեկավարության կարծիքով զգայունության վերլուծությունը չի ներկայացնում բնորոշ արտարժույթային ռիսկը, քանի որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ռիսկին ենթարկվածությանը չի արտացոլում տարվա ընթացքում ռիսկին ենթարկվածությունը: Բ արժույթով արտահայտված վաճառքները սեզոնային են՝ ֆինանսական տարվա վերջին եռամսյակում վաճառքի քիչ ծավալներով, որը հանգեցրել է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Բ արժույթով արտահայտված դեբիտորական պարտքերի նվազման:

Բացի այդ, նոր ներդրման հեջավորման գործիքների վերահաշվարկման համար բոլոր փոխարժեքների նկատմամբ ԴՄ-ի 10% փոփոխության պատճառով սեփական կապիտալը կնվազեր 13,000 ԴՄ-ով (2009թ.՝ 9,000 ԴՄ): Այնուամենայնիվ, զուտ ազդեցություն սեփական կապիտալի վրա չէր լինի, քանի որ այդ տարբերությունը կհաշվանցվեր արտերկրյա ստորաբաժանման վերահաշվարկումից փոխարժեքային տարբերությունների հետ:

40.6.2 Արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր

ՖՀՄՍ 7.22, 33, 34 Ընկերությունն ունի սահմանված քաղաքականություն, ըստ որի յուրահատուկ արտարժույթային մուտքերն ու ելքերը ծածկելու նպատակով կնքվում են արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր՝ ենթարկվածության 70%-ից 80%-ի շրջանակում: Ընկերությունը նաև կնքում է արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր՝ կառավարելու մինչև 6 ամսվա համար նախատեսված վաճառքի և գնումների գործարքների հետ կապված ռիսկը՝ ենթարկվածության 40%-ից 50%-ի շրջանակում: Ոչ ֆինանսական հեջավորված հոդվածների հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են (բազային ճշգրտումներ), երբ նախատեսված վաճառքի կամ գնման գործարքը է տեղի ունենում:

Ընթացիկ տարում Ընկերությունը որոշ ֆորվարդային պայմանագրեր նախորոշել է որպես «Սիփան» ԲԸ-ում իր զուտ ներդրման հեջ, որի ֆունկցիոնալ արժույթը Բ արժույթն է: Ընկերության քաղաքականությունը վերանայվել է, և Բ արժույթի փոփոխականության աճի պատճառով որոշվել է հեջավորել «Սիփան» ԲԸ-ի զուտ ակտիվների մինչև 50%-ը ֆորվարդային արտարժույթային ռիսկի գծով, որն առաջանում է արտերկրյա ստորաբաժանման վերահաշվարկումից: Ընկերությունը կիրառում է «առաջ պտույտով հեջավորման ռազմավարություն» (roll-over hedging strategy)՝ օգտագործելով մինչև 6 ամիս ժամկետով պայմանագրեր: Ֆորվարդային պայմանագրի ժամկետը լրանալուն պես Ընկերությունը նոր պայմանագիր է կնքում՝ նախորոշված որպես առանձին հեջավորման փոխհարաբերություն:

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Հետևյալ աղյուսակում ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված արտարժույթային ֆորվարդային պայմանագրերի մանրամասերը՝

Չմարված պայմանագրեր	Միջին փոխարժեք		Արտարժույթ		Պայմանական գումար		Իրական արժեքով ակտիվներ (պար- տավորություններ)	
	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09
			Հազ. միավոր արտար- ժույթ	Հազ. միավոր արտար- ժույթ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքերի հեջեր								
Գնել Բ արժույթը								
3 ամսից պակաս	0.770	0.768	2,493	2,010	3,238	2,617	152	110
3-ից 6 ամիս	0.768	0.750	1,974	1,958	2,570	2,611	92	34
Վաճառել Բ արժույթը								
3 ամսից պակաս	0.780	0.769	982	1,028	1,259	1,337	(70)	26
Գնել Գ արժույթը								
3 ամսից պակաս	86.29	85.53	12,850	20,000	149	234	(5)	50
Չուր ներդրման հեջ								
Վաճառել Բ արժույթը								
3-ից 6 ամիս	0.763	-	1,000	-	1,297	-	(12)	-
							<u>157</u>	<u>220</u>

Ծանոթագրություն. Վերոնշյալ աղյուսակն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտարժույթային ռիսկերին ենթարկվածության մասին քանակական ամփոփ տվյալների վերաբերյալ հաշվետվության մի օրինակ, որը որպես ներքին (կառավարչական) հաշվետվություն կարող է տրամադրվել ղեկավարությանը:

Ընկերությունը կնքել է պայմանագրեր՝ B երկրի հաճախորդներին էլեկտրոնային սարքավորում մատակարարելու: Այս նախատեսված ապագա գործարքներից առաջացող արտարժույթային ռիսկը հեջավորելու նպատակով Ընկերությունը կնքել է արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր (3 ամիսը չգերազանցող ժամկետներով), որոնք նախորոշված են որպես դրամական միջոցների հոսքերի հեջեր:

ՖՀՄՍ 7.23(ա)

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստում կուտակված արտարժույթային ֆորվարդային պայմանագրերի գծով կորուստների ընդհանուր գումարը, կապված այս նախատեսված ապագա գործարքների գծով ենթարկվածության հետ, կազմում է 70,000 ԴՄ (2009թ.՝ 26,000 ԴՄ օգուտ): Ակնկալվում է, որ վաճառքները տեղի կունենան հաջորդ ֆինանսական տարվա առաջին եռամսյակում, և այդ ժամանակ սեփական կապիտալում հետաձգված գումարը վերադասակարգվելու է շահույթին կամ վնասին:

Ընկերությունը Բ երկրի և Գ երկրի մատակարարներից հումք գնելու պայմանագրեր է կնքել: Ընկերությունը այս նախատեսված ապագա գնումներից առաջացող արտարժույթային ռիսկը հեջավորելու նպատակով կնքել է արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր (6 ամիսը չգերազանցող ժամկետներով), որոնք նախորոշված են դրամական միջոցների հոսքերի հեջերում:

ՖՀՄՍ 7.23(ա)

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստում կուտակված արտարժույթային ֆորվարդային պայմանագրերի գծով օգուտների ընդհանուր գումարը, կապված այս նախատեսված ապագա գնումների գործարքների հետ, կազմում է 239,000 ԴՄ (2009թ.՝ 194,000 ԴՄ չիրացված օգուտներ): Ակնկալվում է, որ գնումները կատարվելու են հաջորդ ֆինանսական տարվա առաջին 6 ամսվա ընթացքում, որի ժամանակ սեփական կապիտալում հետաձգված գումարը ներառվելու է հումքի հաշվեկշռային արժեքում: Ակնկալվում է, որ հումքը վերածվելու է պատրաստի արտադրանքի և վաճառվելու է գնումից հետո 12 ամսվա ընթացքում, և այդ ժամանակ էլ սեփական կապիտալում հետաձգված գումարը վերադասակարգվելու է շահույթին կամ վնասին:

ՖՀՄՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՖՀՄՄ 7.23(բ)	2010թ. երրորդ եռամսյակի սկզբին Ընկերությունը նվազեցրել է Բ երկրում էլեկտրոնային սարքավորման վաճառքի գծով իր կանխատեսումները՝ տեղական աճող մրցակցության և առաքման մեծ ծախսերի պատճառով: Ընկերությունը նախապես հեջավորել էր 1.079 մլն ԴՄ գումարի ապագա վաճառք, որից 97,000 ԴՄ-ն այլևս չի ակնկալվում, որ տեղի կունենան, իսկ 982,000 ԴՄ-ն մնում է խիստ հավանական: Հետևաբար, Ընկերությունը դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստից շահույթին կամ վնասին է վերադասակարգել այն կանխատեսված գործարքների հետ կապված արտարժույթային ֆորվարդային պայմանագրերի գծով 3,000 ԴՄ օգուտը, որոնց տեղի ունենալն այլևս չի ակնկալվում:
ՖՀՄՄ 7.24(գ)	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Սիփան» ԲԸ-ում զուտ ներդրման հեջավորումից շահույթում կամ վնասում ճանաչված անարդյունավետ մաս չկա:
ՖՀՄՄ 7.33, 34	40.7 Տոկոսադրույքային ռիսկի կառավարում Ընկերությունը ենթարկված է տոկոսադրույքային ռիսկին, քանի որ Ընկերությունը ֆինանսական միջոցներ է փոխառնում և հաստատուն, և լողացող տոկոսադրույքներով: Ռիսկը կառավարվում է Ընկերության կողմից՝ հաստատուն և լողացող տոկոսադրույքով փոխառությունների միջև համապատասխան համակցության պահպանմամբ, տոկոսադրույքային սվոպի պայմանագրերի և տոկոսադրույքային ֆորվարդային պայմանագրերի օգտագործմամբ: Հեջավորման գործունեությունը պարբերաբար վերանայվում է ապահովելու համար, որ այն համահունչ լինի Ընկերության համար ընդունելի տոկոսադրույքներին և ռիսկերին՝ միաժամանակ ապահովելով, որ օգտագործվեն առավել խնայողական հեջավորման ռազմավարություններ: Ընկերության ենթարկվածությունները ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսադրույքներին մանրամասնորեն նկարագրված են այս ծանոթագրության իրացվելիության ռիսկի կառավարման բաժնում: <u>40.7.1 Տոկոսադրույքային զգայունության վերլուծություն</u>
ՖՀՄՄ 7.40(բ)	Ստորև բերված զգայունության վերլուծությունները որոշվել են՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ածանցյալ և ոչ ածանցյալ գործիքների համար տոկոսադրույքներին ենթարկվածության վրա: Լողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար վերլուծությունը պատրաստվում է ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարը չմարված է եղել ամբողջ տարում: Հանգուցային կառավարչական անձնակազմին տոկոսադրույքային ռիսկի վերաբերյալ ներքին (կառավարչական) հաշվետվություն ներկայացնելիս օգտագործվում է 50 բազային կետով աճը կամ նվազումը, որը ներկայացնում է տոկոսադրույքներում ողջամտորեն հնարավոր փոփոխության վերաբերյալ ընկերության ղեկավարության գնահատականը:
ՖՀՄՄ 7.34(ա)	Մտորև բերված զգայունության վերլուծությունները որոշվել են՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ածանցյալ և ոչ ածանցյալ գործիքների համար տոկոսադրույքներին ենթարկվածության վրա: Լողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար վերլուծությունը պատրաստվում է ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարը չմարված է եղել ամբողջ տարում: Հանգուցային կառավարչական անձնակազմին տոկոսադրույքային ռիսկի վերաբերյալ ներքին (կառավարչական) հաշվետվություն ներկայացնելիս օգտագործվում է 50 բազային կետով աճը կամ նվազումը, որը ներկայացնում է տոկոսադրույքներում ողջամտորեն հնարավոր փոփոխության վերաբերյալ ընկերության ղեկավարության գնահատականը:
ՖՀՄՄ 7.40(ա)	Եթե տոկոսադրույքները լինեին 50 բազային կետով ավելի բարձր (ավելի ցածր), և մյուս բոլոր փոփոխականները պահվեին հաստատուն, Ընկերության՝ <ul style="list-style-type: none">• 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր (կաճեր) 43,000 ԴՄ-ով (2009թ.՝ 93,000 ԴՄ-ով նվազում (աճ)): Սա հիմնականում վերագրելի է փոփոխական տոկոսադրույքով փոխառությունների գծով տոկոսադրույքային ռիսկին Ընկերության ենթարկվածությանը, և• տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքը կնվազեր (կաճեր) 19,000 ԴՄ-ով (2009թ.՝ 12,000 ԴՄ-ով նվազում (աճ)), որը հիմնականում վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով գործիքների իրական արժեքի փոփոխությունների արդյունք է:
ՖՀՄՄ 7.33(գ)	Տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության զգայունությունը նվազել է ընթացիկ տարում, որը հիմնականում տեղի է ունեցել փոփոխական տոկոսադրույքով պարտքային գործիքների նվազեցման, ինչպես նաև «փոփոխական տալու և հաստատուն ստանալու» տոկոսադրույքային սվոպերի ավելացման պատճառով: <u>40.7.2 Տոկոսադրույքային սվոպի պայմանագրեր</u>
ՖՀՄՄ 7.22, 33, 34	Տոկոսադրույքային սվոպի պայմանագրերի համաձայն՝ Ընկերությունը համաձայնվում է փոխանակել պայմանավորված պայմանական հիմնական գումարների նկատմամբ հաստատուն և լողացող տոկոսադրույքով հաշվարկված գումարների միջև տարբերությունը: Նման պայմանագրերը հնարավորություն են տալիս Ընկերությանը չեզոքացնել տոկոսադրույքների փոփոխման ռիսկը՝ թողարկված հաստատուն տոկոսադրույքով պարտքային գործիքների իրական արժեքի գծով և դրամական միջոցների հոսքերի ռիսկերին ենթարկվածությունները՝ թողարկված փոփոխական տոկոսադրույքով պարտքային գործիքների գծով: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքային սվոպերի իրական արժեքը որոշվում է՝ զեղչելով ապագա

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

դրամական միջոցները՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կորերը և պայմանագրում ներհատուկ պարտքային ռիսկը, և այն բացահայտված է ստորև: Միջին տոկոսադրույքը հիմնված է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված մնացորդների վրա:

ՖՀՄՍ 7.34(ա)

Հետևյալ աղյուսակներում ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված տոկոսադրույքային սվոպի պայմանագրերի պայմանական հիմնական գումարների և մնացյալ ժամկետների մասին մանրամասներ:

Դրամական միջոցների հոսքերի հեջեր

Փոփոխական ստանալու, ֆիքսված վճարելու չմարված պայմանագրեր	Պայմանավորված միջին հաստատուն տոկոսադրույք		Պայմանական հիմնական գումար		Ակտիվ (պարտա- վորություն) իրական արժեքով	
	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09
	%	%	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
1 տարուց պակաս	7.45	6.75	1,000	4,000	72	37
1-ից 2 տարի	7.15	7.05	2,000	1,620	55	47
2-ից 5 տարի	6.75	6.50	3,000	1,359	130	93
5 տարի +	7.05	-	1,000	-	27	-
			<u>7,000</u>	<u>6,979</u>	<u>284</u>	<u>177</u>

Ծանոթագրություն. Վերոնշյալ աղյուսակն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքային ռիսկերին ենթարկվածության մասին քանակական ամփոփ տվյալների վերաբերյալ հաշվետվության մի օրինակ, որն որպես ներքին (կառավարչական) հաշվետվություն կարող է տրամադրվել ղեկավարությանը:

Տոկոսադրույքային սվոպերի գծով վերջնահաշվարկը կատարվում է եռամսյակային հիմունքով: Տոկոսադրույքային սվոպերի լողացող տոկոսադրույքը Ա երկրում տեղական միջ բանկային տոկոսադրույքն է: Ընկերությունը հաստատուն և լողացող տոկոսադրույքների միջև տարբերության գծով վերջնահաշվարկը կատարում է գուտ հիմունքով:

ՖՀՄՍ 7.22, 23(ա)

Տոկոսադրույքային սվոպի բոլոր պայմանագրերը, որոնցով լողացող տոկոսադրույքների գումարները փոխանակվում են հաստատուն տոկոսադրույքների գումարներով, նախորդված են որպես դրամական միջոցների հոսքերի հեջեր՝ նվազեցնելու Ընկերության դրամական միջոցների հոսքերին ենթարկվածությունը, որն առաջանում է փոխառությունների գծով փոփոխական տոկոսադրույքներից: Տոկոսադրույքային սվոպերը և փոխառության գծով տոկոսավճարները կատարվում են համաժամանակյա հիմունքով, և սեփական կապիտալում կուտակված գումարը վերադասակարգվում է շահույթին կամ վնասին այն ժամանակաշրջանում, երբ պարտքի գծով լողացող տոկոսադրույքների տոկոսավճարները ազդում են շահույթի կամ վնասի վրա:

ՖՀՄՍ 7.34(ա)

Իրական արժեքի հեջեր

Ֆիքսված ստանալու, փոփոխական վճարելու չմարված պայմանագրեր	Պայմանավորված միջին հաստատուն տոկոսադրույք		Պայմանական հիմնական գումար		Ակտիվ (պարտավորություն) իրական արժեքով	
	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09	31/12/10	31/12/09
	%	%	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
1 տարուց պակաս [նկարագրել]	8.15	-	3,701	-	(5)	-
	-	-	-	-	-	-
			<u>3,701</u>	<u>-</u>	<u>(5)</u>	<u>-</u>
Առևտրական նպատակներով պահվող տոկոսադրույքային սվոպեր 1-ից 2 տարի [նկարագրել]	7.5	-	15,000	-	(51)	-
	-	-	-	-	-	-
			<u>15,000</u>	<u>-</u>	<u>(51)</u>	<u>-</u>

Ծանոթագրություն: Վերոնշյալ աղյուսակն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքային ռիսկերին ենթարկվածության մասին քանակական ամփոփ տվյալների վերաբերյալ հաշվետվության մի օրինակ, որը որպես ներքին (կառավարչական) հաշվետվություն կարող է տրամադրվել ղեկավարությանը:

ՖՀՄՄ 7.24(ա)

Հաստատուն տոկոսադրույքը փոխանակվում է լողացող տոկոսադրույքով տոկոսադրույքային սվոպերի պայմանագրերը նախորդված են և արդյունավետ են որպես իրական արժեքի հեջեր՝ տոկոսադրույքների գծով: Տարվա ընթացքում հեջը 100% արդյունավետ էր տոկոսադրույքի փոփոխություններին իրական արժեքի ենթարկվածությունը հեջավորելու առումով, և արդյունքում փոխառության հաշվեկշռային արժեքը ճշգրտվել է 5,000 ԴՄ-ով, որը ներառվել է շահույթում կամ վնասում միևնույն ժամանակ, երբ տոկոսադրույքային սվոպի իրական արժեքն է ներառվել է շահույթում կամ վնասում:

40.8 Այլ գնային ռիսկեր

Ընկերությունը ենթարկված է բաժնային ներդրումներից առաջացած սեփական կապիտալի գործիքների գնային ռիսկերին: Բաժնային ներդրումները պահվում են ռազմավարական, այլ ոչ թե առևտրական նպատակներով: Ընկերությունն ակտիվորեն այդ ներդրումների ակտիվ առևտուր չի իրականացնում:

40.8.1 Սեփական կապիտալի գործիքների գնի զգայունության վերլուծություն

ՖՀՄՄ 7.40(բ)

Ստորև բերված զգայունության վերլուծությունները որոշվել են՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփական կապիտալի գործիքներին ենթարկվածության վրա:

ՖՀՄՄ 7.40(ա)

Եթե սեփական կապիտալի գործիքների գները լինեին 5%-ով ավելի բարձր (ավելի ցածր), ապա.

- 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կմնար անփոփոխ, քանի որ բաժնային ներդրումները դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, և ներդրումներն օտարված կամ արժեզրկված չեն, և
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքը կաճեր (կնվազեր) 286,000 ԴՄ-ով (2009թ.՝ 265,000 ԴՄ-ով աճ (նվազում)) վաճառքի համար մատչելի բաժնետոմսերի իրական արժեքի փոփոխությունների արդյունքում:

ՖՀՄՄ 7.40(գ)

Ընկերության զգայունությունը սեփական կապիտալի գործիքների գների նկատմամբ նախորդ տարվանից էականորեն չի փոխվել:

ՖՀՄՄ 7.33,
34,Բ8

40.9 Պարտքային ռիսկի կառավարում

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը իր՝ պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Ընկերությունը որդեգրել է միայն վարկունակ կողմերի հետ գործարքներ կնքելու քաղաքականություն և ձեռք բերելու բավականաչափ գրավ, որտեղ նպատակահարմար է՝ որպես պարտականությունների չկատարումից առաջացած ֆինանսական կորուստի չեզոքացման միջոց: Ընկերությունը գործարքներ է կնքում միայն այն կազմակերպությունների հետ, որոնք ունեն համարժեք կամ ավելի բարձր ներդրումային վարկանիշ: Այս տեղեկատվությունը տրամադրվում է անկախ վարկանշային գործակալությունների կողմից, եթե այդպիսիք կան, իսկ դրանց բացակայության դեպքում Ընկերությունն օգտագործում է այլ հրապարակայնորեն մատչելի ֆինանսական տեղեկատվություն և վաճառքների գծով իր սեփական վիճակագրական տվյալները՝ վարկանշելու համար իր խոշոր գնորդներին: Ընկերության ենթարկվածությունները և իր կոնտրադենտների վարկանիշները շարունակաբար մոնիթորինգի են ենթարկվում, և կնքված գործարքների ընդհանուր արժեքը տարածվում է հավանության արժանացած կոնտրադենտների միջև: Պարտքային ռիսկին ենթարկվածությունը վերահսկվում է յուրաքանչյուր կոնտրադենտի համար սահմանված սահմանաչափերով, որոնք ամեն տարի վերանայվում և հաստատվում են ռիսկերի կառավարման կոմիտեի կողմից:

Առևտրական դեբիտորական պարտքերն ընդգրկում են տնտեսության տարբեր ոլորտների և աշխարհագրական տարածքների միջև սփռված մեծ թվով գնորդների: Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա, և համապատասխան դեպքերում ձեռք է բերվում հնարավոր պարտքային կորուստների գծով ապահովագրություն:

Ա Ընկերությունից բացի, որն Ընկերության ամենախոշոր գնորդն է (տե՛ս ստորև, ինչպես նաև 6.7 և 25.1 ծանոթագրություններ), Ընկերությունը չունի նշանակալի պարտքային ռիսկի ենթարկվածություն որևէ մեկ գնորդի կամ նմանատիպ բնութագրերով գնորդների որևէ խմբի: Ընկերությունը սահմանում է կողմերին որպես նմանատիպ բնութագրեր ունեցող, եթե դրանք կապակցված կազմակերպություններ են: Ա Ընկերության հետ կապված պարտքային ռիսկի համակենտրոնացումը ցանկացած ժամանակ տարվա ընթացքում չի գերազանցել համախառն դրամային ակտիվների 20%-ը: Պարտքային ռիսկի համակենտրոնացումը որևէ այլ կոնտրագենտի գծով ցանկացած ժամանակ տարվա ընթացքում չի գերազանցել համախառն դրամային ակտիվների 5%-ը:

Իրացվելի միջոցների և ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկը սահմանափակ է, քանի որ կոնտրագենտները բանկեր են՝ բարձր վարկանիշներով, որոնք սահմանված են միջազգային վարկանշային գործակալությունների կողմից:

ՖՀՄՄ 7.Բ10(գ)

Բացի վերը նշվածներից, Ընկերությունը ենթարկված է պարտքային ռիսկի՝ Ընկերության կողմից բանկերին տրամադրված ֆինանսական երաշխիքների հետ կապված: Այս առումով Ընկերության առավելագույն ենթարկվածությունն այն առավելագույն գումարն է, որն Ընկերությունը ստոպված կլինի վճարել, եթե պահանջվեր երաշխիքը կատարել (վճարել) (տե՛ս ծանոթագրություն 40.10.1): 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ֆինանսական պարտավորություն է ճանաչված 24,000 ԴՄ գումար (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 18,000 ԴՄ) (տե՛ս ծանոթագրություն 34):

40.9.1 Որպես ապահովություն պահվող գրավ և պարտքային ռիսկի մեղմման այլ միջոցներ

ՖՀՄՄ 7.36(բ)

Ընկերությունը գրավ կամ պարտքային ռիսկի մեղմման այլ միջոցներ չունի՝ ծածկելու իր ֆինանսական ակտիվների հետ կապված պարտքային ռիսկերը, բացառությամբ այն բանի, որ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկը չեզոքացվում է՝ շնորհիվ նրա, որ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն ապահովված են վարձակալված սառնարանային սարքավորման նկատմամբ սեփականության իրավունքով: Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը կազմում է 1.028 մլն ԴՄ (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 0.905 մլն ԴՄ), և վարձակալված ակտիվների իրական արժեքը գնահատվում է մոտավորապես 1.00 մլն ԴՄ (2009թ. դեկտեմբերի 31՝ 0.9 մլն ԴՄ): Ընկերությունն իրավունք չունի վաճառել կամ վերագրավադրել գրավը, եթե վարձակալը չի խախտում վճարումների գրաֆիկը:

Ծանոթագրություն: ՖՀՄՄ 7.36(բ)-ով (փոփոխված՝ որպես 2010 թ.-ին հրապարակված «ՖՀՄՄ-ների բարելավումներ»-ի մի մաս) նշվում է, որ կազմակերպությունները պետք է տան որպես ապահովություն պահվող գրավի և պարտքային ռիսկի մեղմման այլ միջոցների նկարագրությունը, ինչպես նաև դրանց ֆինանսական ազդեցությունը (օրինակ՝ ինչ չափով են գրավը և պարտքային ռիսկի մեղմման այլ միջոցները չեզոքացնում պարտքային ռիսկը) այն գումարի գծով, որը լավագույնս է ներկայացնում պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը: Փոփոխություններն ուժի մեջ են 2011 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

40.10 Իրացվելիության ռիսկի կառավարում

ՖՀՄՄ 7.33, 39(գ)

Իրացվելիության ռիսկի կառավարման վերջնական պատասխանատվությունը տնօրենների խորհրդինն է, որը սահմանել է իրացվելիության ռիսկի կառավարման համապատասխան սխեմա Ընկերության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորումը կառավարելու համար, ինչպես նաև իրացվելիության կառավարման գծով պահանջներ: Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ պահպանելով համապատասխան պահուստներ, բանկային վարկավորման հնարավորություններ, այլ պահուստային փոխառությունների հնարավորություններ՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով: 40.10.2 ծանոթագրությունը ստորև մանրամասնում է այն լրացուցիչ չօգտագործած հնարավորությունների մասին, որն Ընկերությունն ունի իր տրամադրության տակ՝ իրացվելիության ռիսկն ավելի նվազեցնելու համար:

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՖՀՄՍ 7.34, 35, 39(ա)

40.10.1 Իրացվելիության և տոկոսային ռիսկերի աղյուսակներ

Սույն աղյուսակները մանրամասնում են Ընկերության մարման համաձայնեցված ժամանակաշրջաններով ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետների մասին: Աղյուսակները կազմվել են՝ հիմնվելով ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի վրա՝ այն ամենավաղ ամսաթվի դրությամբ, երբ Ընկերությունից կարող է պահանջվել վճարում կատարել: Աղյուսակներն ընդգրկում են թե՛ տոկոսային, և թե՛ հիմնական գումարի դրամական հոսքեր: Այնքանով, որքանով տոկոսների գծով դրամական հոսքերը լողացող տոկոսադրույքով են, չգեղջված գումարն ստացվել է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքների կորերից: Պայմանագրային մարման ժամկետները հիմնված են այն ամենավաղ ամսաթվի վրա, երբ Ընկերությունից կարող է պահանջվել վճարում կատարել:

Ծանոթագրություն: Ստորև բերված աղյուսակը ներառում է միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք և համաձայնեցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված հաշվեկշռային արժեքի հետ՝ որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքային ռիսկերին ենթարկվածության մասին քանակական ամփոփ տվյալների վերաբերյալ հաշվետվության մի օրինակ, որը որպես ներքին (կառավարչական) հաշվետվություն կարող է տրամադրվել ղեկավարությանը:

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք					Ընդամենը
		1 ամսից քիչ	1-3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	1-5 տարի	5+ տարի	
	%	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
2010թ. դեկտեմբերի 31							
Ոչ տոկոսակիր	-	3,247	10,126	-	3,000	-	16,373
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	4	1	2	7	6	-	16
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	£	893	339	3,136	6,890	-	11,258
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ	7	1,735	4,825	12,389	30,035	2,898	51,882
Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր	-	2,000	-	-	-	-	2,000
		<u>7,876</u>	<u>15,292</u>	<u>15,532</u>	<u>39,931</u>	<u>2,898</u>	<u>81,529</u>
2009թ. դեկտեմբերի 31							
Ոչ տոկոսակիր	-	5,038	16,182	-	-	-	21,220
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	£	5	10	43	44	-	102
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	£	7,701	1,409	7,045	24,921	-	41,076
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ	£	1,554	3,129	7,238	15,945	-	27,866
Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր	-	1,600	-	-	-	-	1,600
		<u>15,898</u>	<u>20,730</u>	<u>14,326</u>	<u>40,910</u>	<u>-</u>	<u>91,864</u>

ՖՆՄ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

ՖՆՄ 7.Բ10(զ)

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի գծով վերը ներառված գումարներն այն առավելագույն գումարներն են, որոնք Ընկերությունը կարող է ստիպված լինել մարել երաշխավորված ամբողջ գումարի գծով, եթե կոնտրագենտն այդ գումարի պահանջը ներկայացնի երաշխավորողին: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակնկալիքներից ելնելով Ընկերությունը գտնում է, որ ավելի հավանական է, քան ոչ, որ այդ գումարը վճարելու կարիք չի լինի: Այնուամենայնիվ, այս գնահատականը ենթակա է փոփոխման՝ կախված երաշխիքի ներքո կոնտրագենտի՝ պահանջ ներկայացնելու հավանականությունից, որը ֆունկցիա է կոնտրագենտի կողմից պահվող երաշխավորված ֆինանսական դեբիտորական պարտքերի՝ պարտքային կորուստներ կրելու հավանականությունից:

ՖՆՄ 7.34, 35

Սույն աղյուսակը տրամադրում է մանրամասեր ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների գծով Ընկերության ակնկալվող մարման ժամկետների մասին: Աղյուսակը կազմվել է՝ հիմնվելով ֆինանսական ակտիվների չզեղչված պայմանագրային մարման գումարների և ժամկետների վրա, ներառյալ տոկոսները, որոնք վաստակվելու են այդ ակտիվների գծով: Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների մասին տեղեկատվության ընդգրկումն անհրաժեշտ է՝ հասկանալու համար Ընկերության իրացվելիության ռիսկի կառավարումը, քանի որ իրացվելիությունը կառավարվում է զուտ ակտիվի և պարտավորության հիմունքով:

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	3 ամսից մինչև 1 տարի					Ընդամենը
		1 ամսից պակաս	1-3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	1-5 տարի	5+ տարի	
	%	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
2010թ. դեկտեմբերի 31							
Ոչ տոկոսակիր Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	-	11,216	8,033	-	-	-	19,249
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ	5.75	26,979	4,367	3,944	1,346	-	36,636
	7.38	-	-	-	3,091	-	3,091
		<u>38,195</u>	<u>12,400</u>	<u>3,944</u>	<u>4,437</u>	<u>-</u>	<u>58,976</u>
2009թ. դեկտեմբերի 31							
Ոչ տոկոսակիր Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	-	8,493	6,165	-	-	-	14,658
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ	4.83	21,418	3,125	5,204	353	-	30,100
	7.00	-	-	-	2,600	-	2,600
		<u>29,911</u>	<u>9,290</u>	<u>5,204</u>	<u>2,953</u>	<u>-</u>	<u>47,358</u>

ՖՆՄ 7.Բ10Ա(բ)

Փոփոխական տոկոսադրույքով գործիքների (ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների) գծով վերը ներառված գումարները ենթակա են փոփոխման, եթե փոփոխական տոկոսադրույքի փոփոխությունները տարբերվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ որոշված տոկոսադրույքների գնահատականներից:

ՖՆՄ 7.39(զ)

Ընկերությունն ունի ֆինանսավորման հնարավորություններ, ինչպես նկարագրված է ստորև 40.10.2 ծանոթագրությունում, որոնցից 9.268 մլն ԴՄ-ն չօգտագործված էր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (2009թ.՝ 12.617 մլն ԴՄ): Ընկերությունն ակնկալում է կատարել իր այլ պարտականությունները գործառնական դրամական միջոցների հոսքերի, ինչպես նաև մարման ժամկետին հասնող ֆինանսական ակտիվներից ստացվող մուտքերի հաշվին:

ՖՆՄ 7.39(բ)

Հետևյալ աղյուսակը մանրամասնում է ածանցյալ ֆինանսական գործիքների գծով Ընկերության իրացվելիության վերլուծությունը: Աղյուսակը կազմվել է՝ հիմնվելով զուտ հիմունքով մարվող ածանցյալ գործիքների գծով չզեղչված պայմանագրային զուտ դրամական ներհոսքերի և արտահոսքերի վրա և չզեղչված համախառն ներհոսքերի և արտահոսքերի վրա այն ածանցյալ

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

գործիքների գծով, որոնք պահանջում են հիմքում ընկած գործարքի իրագործում (այլ ոչ թե զուտ մարում): Եթե վճարման կամ ստացման ենթակա գումարը հաստատուն չէ, բացահայտված գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ որոշվում է կանխատեսված տոկոսադրույքների հիման վրա, ինչպես արտահայտված են եկամտաբերության կորեերում:

	1 ամսից պակաս Հազ. դրամ	1-3 ամիս Հազ. դրամ	3 ամսից մինչև 1 տարի Հազ. դրամ	1-5 տարի Հազ. դրամ	5+ տարի Հազ. դրամ
2010թ. դեկտեմբերի 31					
Զուտ հիմունքով մարվող՝					
- տոկոսադրույքային սվոպեր	11	50	205	302	121
- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր	(5)	(21)	13	-	-
Համախառն հիմունքով (իրագործմամբ) մարվող՝					
- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր	12	35	-	-	-
- արժույթային սվոպեր	-	-	-	-	-
	<u>18</u>	<u>64</u>	<u>218</u>	<u>302</u>	<u>121</u>
2009թ. դեկտեմբերի 31					
Զուտ հիմունքով մարվող՝					
- տոկոսադրույքային սվոպեր	7	18	22	160	82
- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր	10	15	9	-	-
Համախառն հիմունքով (իրագործմամբ) մարվող՝					
- արտարժույթային ֆորվարդային պայմանագրեր	65	132	21	-	-
- արժույթային սվոպեր	-	-	-	-	-
	<u>82</u>	<u>165</u>	<u>52</u>	<u>160</u>	<u>82</u>

40.10.2 Ֆինանսավորման (վարկավորման) հնարավորություններ

ՀՀՄՍ 7.50(ա)

	31/12/10 Հազ. դրամ	31/12/09 Հազ. դրամ
Չապահովված բանկային օվերդրաֆտի հնարավորություն, որը վերանայվում է տարեկան և ենթակա է վճարման ըստ պահանջի.		
- օգտագործված գումար	520	314
- չօգտագործված գումար	<u>1,540</u>	<u>2,686</u>
	<u>2,060</u>	<u>3,000</u>
Մուրհակների ընդունման (մարման) հնարավորություն՝ չապահովված, որը վերանայվում է տարեկան.		
- օգտագործված գումար	358	916
- չօգտագործված գումար	<u>1,142</u>	<u>1,184</u>
	<u>1,500</u>	<u>2,100</u>
Ապահովված բանկային օվերդրաֆտի հնարավորություն.		
- օգտագործված գումար	18	64
- չօգտագործված գումար	<u>982</u>	<u>936</u>
	<u>1,000</u>	<u>1,000</u>

ՖՀՄՍ-ներին համապատասխան ցուցադրական ֆինանսական հաշվետվություններ 2010

Ապահովված բանկային փոխառությունների հնարավորություններ`

2011թ. մեջ ընկնող մարման տարբեր ժամկետներով, որոնք կարող են երկարացվել փոխադարձ համաձայնությամբ.

- օգտագործված գումար	14,982	17,404
- չօգտագործված գումար	5,604	7,811
	<u>20,586</u>	<u>25,215</u>

40.11 Ֆինանսական գործիքների իրական արժեքը

40.11.1 Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը

ՖՀՄՍ 7.25, 29(ա)

Բացի ստորև բերված աղյուսակում նկարագրված դեպքից, տնօրենները գտնում են, որ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

	31/12/10		31/12/09	
	Հաշվե- կշռային արժեք	իրական արժեք	Հաշվե- կշռային արժեք	իրական արժեք
	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ
Ֆինանսական ակտիվներ				
<i>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր.</i>	22,886	22,919	17,746	17,627
- փոխառություններ կապակցված կողմերին	3,637	3,808	3,088	3,032
- առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19,249	19,111	14,658	14,595
<i>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.</i>	5,905	5,922	4,015	4,016
- մուրհակներ	5,405	5,420	4,015	4,016
- պարտատոմսեր	500	502	-	-
<i>Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր</i>	1,028	1,102	905	898
Ֆինանսական պարտավորություններ				
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>	59,026	57,833	78,209	76,443
- մուրհակներ	358	350	916	920
- փոխարկելի պարտատոմսեր	4,144	4,120	-	-
- հարատև պարտատոմսեր	1,905	2,500	-	-
- բանկային փոխառություններ	16,443	15,650	17,782	16,840
- փոխառություններ կապակցված կողմերից	12,729	12,300	31,514	31,090
- փոխառություններ այլ կազմակերպություններից	4,276	3,980	4,167	4,050
- պետությունից ստացված անտոկոս փոխառություն	2,798	2,711	2,610	2,546
- առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	16,373	16,222	21,220	20,997
<i>Ֆինանսական վարձակալության գծով կրեդիտորական պարտքեր</i>	14	12	89	87

40.11.2 Իրական արժեքի չափման նպատակներով կիրառված գնահատման մեթոդներն ու ենթադրությունները

ՖՀՄՍ 7.27

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվել են հետյալ կերպ.

- Ստանդարտ ժամկետներով և պայմաններով և ակտիվ շուկաներում վաճառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվում են ակտիվ շուկայում գնանշումների հիման վրա (ընդգրկում է ցուցակված մարեի պարտատոմսեր, մուրհակներ և հարատև պարտատոմսեր):
- Ածանցյալ գործիքների իրական արժեքները հաշվարկվում են ակտիվ շուկայում գնանշվող գների օգտագործմամբ: Երբ չկան նման գներ, իրականացվում է զեղչված դրամական միջոցների հոսքերի վերլուծություն՝ օգտագործելով գործիքների ժամկետներին համապատասխան եկամտաբերության կորը (ոչ հայեցողական գործիքների համար), իսկ հայեցողական գործիքների համար՝ օգտագործելով օպցիոնների գնորոշման մոդելներ: Արտարժույթային ֆորվարդային պայմանագրերը չափվում են՝ օգտագործելով գնանշված ֆորվարդային փոխարժեքներ և գնանշված տոկոսադրույքներից բխող եկամտաբերության կորեր՝ պայմանագրերի մարման ժամկետներին համապատասխանող: Տոկոսադրույքային սվոպերը չափվում են ապագա դրամական միջոցների ներկա արժեքով, որոնք գնահատվել և զեղչվել են՝ հիմնվելով գնանշված տոկոսադրույքներից բխող կիրառելի եկամտաբերության կորերի վրա:
- Այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները (բացառությամբ վերը նկարագրվածների) որոշվում են լայնորեն ընդունված գնորոշման մոդելներին համապատասխան, որոնք հիմնված են դրամական միջոցների հոսքերի զեղչման վրա:

ՖՀՄՍ 7.27

Կոնկրետ, հետևյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելիս օգտագործված են չանակալի ենթադրությունները բերված են ստորև:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է 1.102 մլն ԴՄ (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 0.898 մլն ԴՄ)՝ կիրառելով 8.5% զեղչման դրույքը (2009թ. դեկտեմբերի 31՝ 8.25%), որը հիմնված է գնանշվող հնգամյա սվոպի տոկոսադրույքի վրա՝ գումարած դեբիտորական պարտքերի ապահով բնույթն արտացոլող պարտքային ռիսկի մարժա:

Մարեի կուրակային արդոնյալ բաժնետոմսեր

Դրամական միջոցների հոսքերի զեղչման համար կիրառված տոկոսադրույքը 7.43% էր՝ հիմնվելով 17 ամսվա փոխառության գծով գնանշվող սվոպի 7.15% տոկոսադրույքի վրա՝ պարտքային ռիսկի մարժան պահելով անփոփոխ:

Փոխարկելի պարտավորումներ

Փոխարկելի պարտատոմսերի պարտավորության բաղադրիչի իրական արժեքը որոշվում է ենթադրելով, որ մարումը տեղի կունենա 2013թ. սեպտեմբերի 1-ին և կիրառելով 7.95% տոկոսադրույք՝ հիմնվելով 32 ամսվա փոխառության գծով գնանշվող սվոպի 6.8% տոկոսադրույքի վրա՝ պարտքային ռիսկի մարժան պահելով անփոփոխ:

ՖՀՄՍ 7.27Բ(ե)

Չցուցակված բաժնետոմսեր

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են ներդրումներ չցուցակված բաժնետոմսերում, որոնք չափվում են իրական արժեքով (ծանոթագրություն 22): Իրական արժեքը գնահատվում է՝ կիրառելով դրամական միջոցների հոսքերի զեղչման մոդել, որն ընդգրկում է որոշ ենթադրություններ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական գների վրա:

Իրական արժեքը որոշելիս կիրառվում է 5.2% շահույթի աճի գործակիցը (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 4.9%) և 12.2% ռիսկով ճշգրտված զեղչման գործակիցը (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 11.9%):

Եթե գնահատման մոդելը մուտքագրվող այս ելակետային տվյալները լինեին 10%-ով ավելի բարձր (ավելի ցածր), իսկ մյուս բոլոր փոփոխականները մնային անփոփոխ, բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը կնվազեր (կաճեր) 7,000 ԴՄ-ով (2009թ. դեկտեմբերի 31-ին՝ 8,000 ԴՄ-ի նվազում (աճ)):